

ԱՏ. ԶՈՐՅԱՆ

ՎԱՐԴԱՁՈՐԻ ԿՈՄՈՒՆՈ



ԽԵՏԱՐԱԾ

991 - 99

9 - 83

o

1930

ՅԵՐԵՎԱՆ

391.99

2-83

ար

Ա. ԶՈՐՅԱՆ

Հիմք վեհականությունը.

Ա. Զորյան

26x30

ՎԱՐԴԱՉՈՐԻ
ՀՐԱՄԱ

ԿՈՄՈՒՆԱ

Բ. Ժ

ՊԵՏԱՐԱՍ 1930 ՅԵՐԵՎԱՆ

12 APR 2019

30149

ՎԱՐԴԱԶՈՐԻ ԿՈՄՈՒՆԸ

Ով հող ունի հա կախ ունի
Յամա, տուծ:

I

Գյուղը Վարդաձոր է կոչվում, գուցե, մաս-
րի թփերի պատճառով, վոր առատորեն լցնում
են այն հովիտը, ուր փոփած է ինքը Վարդա-
ձորը: Մասրի թփեր կան գետի ափերին, ար-
տերի միջակներում և հեռու լեռնալանջերին.
փոքր ու մեծ խմբերով, բայց մեծ մասամբ կա-
նաչ փնջերի նման, տարածվում են նրանք
ամեն կողմ: Գարնանը տալիս են սպիտակ վար-
դեր, ուշ աշնանը՝ կարմիր մասուր, վոր աղջիկ-
ներ ու կանայք քաղում են կեռ շամփուրներով
և արևի տակ չորացնելով, ձմեռը յեփում են
կարմիր մասրամածուն:

Յեկ դա Վարդաձորում համարվում է ըն-
տիր կերակուրներից մեկը:

Աղքատ է Վարդաձորը, բայց ջրառատ: Դրա
համար ել վարդաձորցիք ասում են:

— Հացներս պակաս ա, բայց ջուրներս՝ լավ...

Ու կարծես պարծենում են, վոր այդպես ե:—
Հացը՝ գլուխը քարը, ջուրը հո կա... ճիշտ ե,
շատ տարորինակ է թվում նրանց այդ հայտա-
րաբությունը, բայց վարդաձորցիք իրավունք



1728
34

Հրատ. № 1324

Գրառակ. № 5235 (ր) Պատ. № 611 Տիրաժ 2000

Պետհրատի լեռնորդ տպարան Յերևանում.

ունեն պարծենալու։ Վորովինետև նրանց մոտ՝
սարերում գյուղեր կան, վոր աղքատության,
հացի պակասության յետ միասին ջուր ել չու-
նեն։

Այ թե ինչու են պարծենում վարդաձորցիք։
Բացի այն, վոր շըակայքում կան բազմա-
թիվ աղբյուրներ, հենց գյուղի կողքով ել անց-
նում ե մի գետ, վոր ջրում ե վարդաձորցիների
տափարն ու բռնտանները։ Զմեռը, ճիշտ ե, նրա
ջուրը բարակում ե քիչ բայց գարնանը, յերբ
դաշտի ու սարերի ձյունն սկսում ե հալվել—նա
պղտորվում ե, ուռչում, կատաղում և հեղ, գրե-
թե նվազած ձայնը փոխում մոլեգին ու ահռելի
թշոցի։ Հոսում ե սրբնթաց, պղտոր ու մթին
ալիքները՝ բանակների նման առաջ մղելով։ Յեկ
այդ ժամանակ թե մարդ թե անասուն զգուշա-
նում են նրանից։ Յերբեմն նա դուրս ե գալիք
ափերից և հեղեղում շուրջը գտնվող գեռես չը-
ցանված հողերը։ Այդ լինում ե և հորդ անձրե-
ներին, բայց գլխավորապես այն ժամանակ
յերբ արեից հալվող ձյունները բազմաթիվ վտակ-
ներ կազմած՝ պղտոր աղմուկով իջնում են լեռ-
նալանջերից և թափվում նրա մեջ։

Այդպիսի գեղքերում, այսինքն գետի շատ
վարարած տարին, վարդաձորի ծերերը գուշա-
կում են, վոր տարին լավ տարի ե լինելու։

Այդպիս վարարած եր գետը և այս տարի...
Բայց թե ում համար լավ կլիներ տարին—դժ-
վար ե ասել. սակային նա վատ լուսացավ Ավե-
տանց Ահարոնի համար։

Վաղ գարնան մի մուժ յերեկո, յերբ վարարած
գետը մոնչում ու տնքում եր գյուղի մոտ — Ա-
հարոնը մեն-մենակ ու մույլ հոնի ձեռնափայտը
ձեռին՝ գնում եր տուն։ Մութի մեջ նրա դեմքը
լավ չեր յերեւում, բայց անկանոն քայլվածքից
և այն բանից, վոր ձեռնափայտը անսովոր թը-
րթկացնում եր գետնին—յերեւում եր, վոր սաս-
տիկ զայրացած ե։ Դա յերեւում ե և այն բանից
վոր նա տնքում եր մոնչալու պես և գլուխը
շարժում շուտ-շուտ։

Քանի մոտենում եր տանը, այնքան նրա
զայրույթի նշանները շատանում եյին. տնքոց-
ները դառնում եյին հաճախակի և ձեռնափայտն
ավելի ուժգին եր զարկվում գետնին։ Իսկ յերբ
տան դուռը ուսով բաց արավ ու ներս մտավ՝
կնոջն ու տղային տեսավ,—այնպես խորը տըն-
քաց, կարծես մի բան փլեց հաղթ կրծքի տակ։

— Ի՞նչ ին ասում, այ մարդ. ինչի՞ ին կան-
չեր—հարցրեց կիսը նրա տնքոցից անհանդստա-
ցած, ձեռի գուլպան ծնկանը գնելով։

Ահարոնը բաց թողած դուռը շրխկացրեց,
ձեռնափայտը դեմ արավ շեմափայտին, մի քա-

նի ծանր քայլ արավ դեպի սենյակի կենտրոնը և կնոջը պատասխանելու փոխարեն, գլխարկը նետեց տախտի վրա: Բացվեց նրա՝ վոզնու գույն մազերով գլուխը:

— Լիբը լըբի զավակ,—ասաց նա իրար սեղած ատամների արանքից:—Իրան ու արած բաներին... Հըմ: Նոր հավեր են դուրս յեկել, յերկաթե ձուեր են ածում: Հացթուխ Մարանի տղեն ենքան ա մեծացել, մեծ մարդ դառել, վոր մարդու ել մարդատեղ չի դնում...

— Ի՞նչ ե պատահել, այ մարդ,—անհանգստացավ նորից կինը՝ նազլու աքիբը, ձեռի գուշպան ծնկանը պահած, մտահոգ աշքերը մարդուն հառելով:—Ի՞նչ ին ասում ախր. մի ասա տեսնանք...

— Լրբէր,—կրկնեց Ահարոնը և բարկությունից քացով խիեց առջևից անցնող կատվին:— Կորի, շան անտեր...

Կատուն յետել ծուած ու վոտի մեկը բարձրացրած՝ կիախավմատավ տախտի տակ ու մլավեց այնտեղ:

Տղան՝ Գալոն, վոր մոտ յերեսուն տարեկան, մաշված դեմքով յերիտասարդ եր, խեթնայեց հորը և յերեսը կրկին դարձրեց դեպի պատը:

Նազլու աքիբը անհամբերությունից ճառում եր.

— Լավ, այ մարդ, մի ասա տեսնանք ինչ ասին ե. ի՞նչի ին կանչել ե...

— Լավ բանի համար հո չեն կանչիլ լըբերը. կամ հարկ կամ տուրք: Դուքանը փակեցինք: Ելի չպըծանք: «Կանչեցի, ասում ե, հայտնեմ»...

— Ո՞վ ա ասում:

— Մարանի տղեն, վոր հիմի, վոչ բարով, նախագահ ա:

— Հա, ի՞նչ ա ասում:

— «Կանչեցի, ասում ա, հայտնեմ, վոր ես տարի ձեր կարտոլատեղը չփարեք»: «Խի»—ասում եմ: «Թե՛ դա վեր ենք գրել»: «Ի՞նչի, ինչու համար»... «Պետք ա»,—ասում ա.—«Կոմուն ենք սարքելու»: «Կոմունը վորն ա» ասում եմ: «Դե յես չեմ նստելու բացատրեմ: Միայն հայտնում եմ, վոր իմանաք—ուրիշ վոչինչ»... Հացթուխ Մարանի տղան գրափառ ա ջարդում. «Չեմ նստելու բացատրեմ»... Լայաղ չի անում խոսել... Հըմ...

— «Կոմունը» վորն ա, այ մարդ:

Ահարոնը տնքաց ու ձեռքերը յետել դրած՝ շարունակեց անց ու դարձը:

— Յես ինչ գիտեմ, գլուխն իրենց քարը:

— Կոմունը, — ասաց Գարոն, ավելի մորը դասնալով, քան հորը, — են որը խոսում եյին, վոր Զաքարանց Բենոն ա՝ ուզում եղանակ բան սարքի։ Մթամ միասին վարեն, ցանեն։ Մի քանի ել ընկեր ա գտել, ասում են...

Ծաղները լսեցին Գարոյին և շարունակեցին իրենցը։

- Ասում ա՝ «դու հող շատ ունես»...
- Բա չասիր, վոր եղիմ ամենալավ հողն ա:
- «Հենց դրա համար ել, ասում ա, պետք ա»։
- Բա չասիր, վոր առել եմ, այ կրակվեն դրանք։

— Ասում ա՝ մեր որենքում հողն առնելծափել չկա։ Հողը մերն ա, ում ուզենք՝ կտանք, ումից ուզենք՝ կիալենք։ «Վո՞նց թե, ասում եմ, յես կովով, փողով հող առնեմ, դուք խլեք»... Ասում ա՝ «ունեցել ես, առել ես»... Տես, քոսոտ Մարանի տղեն ենքան ա զարդացել, վոր որենքից ա խոսում։ Մրանը հացով մեծացել ա, հիմի...

— Մեր հացի մեջ աղ չկա, — ասաց կինը, — աչքերը քոռացնի։ Քոսոտ մերը վոտաքորիկ գալիս եր աղաչում-խնդրում, վոր ուրիշ հացթուխ չկանչեմ. խղճում եյի, թե վորքի տեր ա, թողերքի, ըեխա մեծացնի...

— Հիմի մեծացել ա, տես մարդու ել մարդատեղ ա դնում...

— Մեր հացն աչքերը քոռացնի, — կրկնեց Նազլու աքիրը։ — Մի տեսնեմ, ենենց շապեմ վոր—շունը ձեռիցը հաց չառնի. ել վոչ մեծ ա մնացել, վոչ պուճուր...

Անարոնը ծանը հոգոց քաշեց ու դլուխն որորեց. նրա ալեխանն մազերով ծածկված ծընոտները ծոմովեցին, քթածակերը լայնացան։

— Ե՞ն, աշխարհս լրբացավ, — ասաց նա։ Աստծուն ու սրբերին են հայհոյում, ուր մնաց թե...

— Դե, նրանցում ելյեթե մի զորություն կա, — վրա բերեց Նազլու աքիրը, — թող քարե կարկուտ թափի եղ լրբերի գլխին, վոր իմանամ թե յերկնային պատիժ կա...

Ու Նազլու աքիրը ձեռները, ջերմեռանդ աղոթողի նման, բարձրացրեց վեր։

— Ասում ա՝ «ունեցել ես — առել ես»։ Ե՛, աշխատել եմ, առել եմ։ Ուրիշների նման պարապ չեմ նստել, գողություն չեմ արել... քըրտինք եմ թափել։

— Լավ, ես սաղ գեղում մենակ մեր հողը տեհան, — ավելի հուզվեց Նազլու աքիրը։

— Սողոմի հողն ել են վեր դնում. մեր

կողքի կարտոլատեղը, — պատասխանեց Ահարոնը, մի քիչ հանգստացած, վոր ինքը մենակ չի:

Մարդ ու կին խոսեցին ելի կոմունի մասին. արդյոք ինչ պիտի լինի արդ «կոմունը», վոր այդքան հող եւ վերցնում: Յեվ Գարոն նորից միջամտեց խոսակցության ու ասաց, վոր արդ «կոմունը» սարքելու եւ Զաքարանց բենոն:

— Մթամ միասին պտի վարեն, ցանեն: Մի քանի ել ընկեր ա գտել, ասում են...

— Բենոն. Գայանի աղեն, — ասաց մարդը: — Մի բարի պտուղ ել նա չի, հողեմ գլուխը. երեկվա գլադի մինն ել նա ա .. Մի տարի տերտերանց տափարը պահում եր, հախը կտրեզին-չկտրեցին, — մի մանեթի. համար կոիվ սարքեց, վողորմածիկ տերտերին ուշունց տվեց. հողեմ նրա թոկից փախած գլուխն ել ենտեղ: Ռուսաստանից հաղիա յեկավ...

— Դրա համար եր ենտեղ նստած լիբբը, — գլխի ընկավ Ահարոնը:

— Ասում ն` ուզում ա... — սկսեց Գարոն, բայց ծնողսերը նրան ելի չուզեցին լսել, ավելի շուտ ուշադրություն չեյին դարձնում նրա վրա:

Ծնդողներն առնասարակ, մանավանդ հայրը, վորդու հետ չունեյին: Պատճառը Գարոյի վատ վարք, եր: Զահել ժամանակ շ բաթներով գնում եր քաղաք՝ ընկեր տղերանց հետ քեֆ անելու և ժամանակ անցկացնելու: Ու յերկար չվերադարձ: Մի որ ել (այդ պատերազմի տարին եր) լսեցին՝ Գարոն կամավոր ե գրիկել գնացել ե «հային ոգնելու»: Գյուղացիք զարմացան և հերգնեցին, թե «իմի», իրա հերը հայ չի, ինչու իրա հորը չի ոգնում, խանութի գործերը մենակ ե անում... Իսկ ծնոները տիրեցին ավելի, քան յերբեք. Նրանք իրենց խայտառակված զգացին զյուղի մեջ, վոր Գարոն վոչ միայն չուղղվեց, այլ մի ամսական հարսին թողեց ու գնաց. և վորոշեցին նրան ել իրենց «վորդին չհամարել»: Ինչ վերաբերում ե հարսին, նա յել, ավելի զյուղի աղաթը հարգելու համար, սպասեց մի տարի ու, վերջը, գնաց հորանց տուն: Այնուհետև յերեք տարի անց՝ Գար-

անց՝ ացնում», հոր խանութից տարած վոր երով քեֆ անում, վըայի շորերից մեկը կամ յերկուսւ ծախած վերադառնում: Ահագին անհամություն եր լինում: Հայրը թքում եր, մըում, չեր ո գում առւն ընդունել, մայրը նույնպես վատ խոսքեր եր ասում: բայց շուտով սկսում եր լալ և մարդուն համոզել. «ամոթ ե»... Այդ տեսնելով՝ բարեկամ-ազգական խորհուրդ տվին. «Պսակի, թող տանու ըլի»... Ահարոնը լսեց և պսակ ց: Հարսը լավն եր, լավ ել ոժիտ բերեց, բայց Գարոն մի ամիս հետո նորից իրեն զցեց քաղաք՝ ընկեր տղերանց հետ քեֆ անելու և ժամանակ անցկացնելու: Ու յերկար չվերադարձ: Մի որ ել (այդ պատերազմի տարին եր) լսեցին՝ Գարոն կամավոր ե գրիկել գնացել ե «հային ոգնելու»: Գյուղացիք զարմացան և հերգնեցին, թե «իմի», իրա հերը հայ չի, ինչու իրա հորը չի ոգնում, խանութի գործերը մենակ ե անում... Իսկ ծնոները տիրեցին ավելի, քան յերբեք. Նրանք իրենց խայտառակված զգացին զյուղի մեջ, վոր Գարոն վոչ միայն չուղղվեց, այլ մի ամսական հարսին թողեց ու գնաց. և վորոշեցին նրան ել իրենց «վորդին չհամարել»: Ինչ վերաբերում ե հարսին, նա յել, ավելի զյուղի աղաթը հարգելու համար, սպասեց մի տարի ու, վերջը, գնաց հորանց տուն: Այնուհետև յերեք տարի անց՝ Գա-

բոն վերադառձավ՝ վրան-գլուխը զզզզված, անձանաչելի, մուրացիկի նման։ Հայրը՝ Ահարոնը չեր ուղում տուն թողնել բայց մայրն աղաչեց-պաղատեց, վոր խստասիրու չլինի... Ու հիմա Ահարոնը աշքով-աչք չուներ նրան տեսնելու։ Մայրն ել եր աչքից գցել բայց խղճում եր և, տեղն յեկած ժամանակ, խրատում, վոր մի բան անի, մի գործի մտնի։ Գյուղում ծառայություն չկար, և նա ինքն ել չգիտեր, թե ինչ կարող ե անել ուստի աշխատում եր տաճը ոգտակար լինել և այնպես անել, վոր հորը գուը գա... Ահարոնը, սակայն, շարունակում եր վորդու հետ շխոսել, ու միշտ առիթ եր փնտում իր դժգությունը նրան հայտնելու։ Այժմ ել խոսելով, թե՝ «գյաղաները գեղի տեր են դառել» — ուղեց ելի վորդուն խայթել։

— Քոստ Մարանին հավան չես, — առաց նա կողը, — բայց նա քեզանից բախտավոր ա: Քեզ նման փուչ տղի տեր չի։

— Լավ, այ մարդ, լավ, — ասաց կինը մեղմ, հաշտարար ձայնով, ամուսնու բարկությունը չդրդուելու համար։ — Լավ ա նրա պես տղեն չըլ ել, վոր աւրիշի տուն ա քանդում։

— Իսկ քունն ում տունն ա շինում, — խայթեց Ահարոնը նորից, սենյակի մեջտեղը կանգնելով, վիզը մի կողմի վրա թեքած ու վիճելու

պատրաստ։ — Մի կորեկի ոգուտ տալիս աքեղ...

Գարոն յերեսն ավելի դարձրեց դեպի պատը ու գլուխը կախեց։

Բայց Ահարոնը, առանց նրա կողմը նայելու, շարունակեց։

— Բա վոր յես նամուսով տղա ունենայի՝ եսպէս կվարվեյին ինձ հետ... Բա լավ տղեն կթողներ, վոր վոսկու պես հողն ուրիշ ձեռն լինի. հը...»

Ահարոնն ինքն ել գիտեր վոր Գարոն վո-չինչ չի կարող անել բայց այդ ըոպեյին նա կարիք եր զգում բարկությունը մեկի գլխին թափելու։ Յեվ հարմարը վորդին եր։

Յերբ հայրն սկսեց հանդիմանությունը, Գարոն, ինչպես միշտ այդպիսի գեպքերում, վեր-կացավ, զլիարկն առավ ու գուրս յեկավ ան-խոս։

Հայրը գլուխն որորեց նրա յետեից.

— Յես ել կասեմ՝ լոշումը հալվա ունեմ...
II

Զաքարենց Բենոն, վորի մասին խոսում եյին Ահարոնի ընտանիքում, Ռուսաստանից նոր եր յեկել գյուղ։ — Յերկարածիտ կոշիկներ ուներ, կիսամուշտակ և զլիսին՝ ականջակալներով մի

գլխարկ, վորը, գյուղացիները տեսնելուն պես նմանեցրին շան «լոշտակ» ականջների. Զինվոր գնալուց հետո՝ Բենոն վեցշոթ տարի բացակայեր գյուղից. Հորոհինդ տարի զորքի մեջ ել յեղել, հետո մասնակցել եր քաղաքացիական կոփակներին, ապա վերջին յերկու տարին ծառայել եր ինչ-վոր լազարեթում, իբրև սանիտար բայց վորովհետեւ, իր ասելով, այդ քաղաքի «ողի չեր վերցրել», բժիշկները խորհուրդ եյին տվեցնալ հայրենիք... Հիմա յեկել եր... Նրա հայրը վաղուց եր մեռել, փոքր յեղբայրն եր, նրա բացակայության ժամանակ, անտառում փայտ կարելիս՝ ծառի տակն եր ընկելմեռել: Մնացել եր միայն պառավ մայրը, և ուրիշ վոչ-վոռ Առաջի պես մայրը ապրում եր իրենց պապական տանը, փորի պատերն անտաշ քարից ելի՛ ու հողով գրած, այնպես վոր գաբունը պատեր արանքին միշտ կանանչ եր դուրս գալիս, իսանձրեւ ժամանակ հո՛ տունը կաթում եր. ավել շուտ մրաջուր եր թափում առաստաղից, վորովհետեւ տունը միաժամանակ թոնրատուն եր ոճորքն ու պատերն ամբողջ սև մուր. թվու եր սև ներկած: Պառավ Գայանը պահում եր մայծ, հավեր, հասնում եր որանը բանին, մակերներն այդ լամպի շուրջը բոլորած՝ հետաքրքիր լոր լուսավորում մրոտ թոնրատունը, և ընայիծ եր գաղափառ կապահանց առաջի շուրջը բոլորած՝ հետաքրքիր լոր լուսավոր կապահանց:

Վեկ այդ իսկ յերեկո, յիրք Ահարոնի ընտանիքում խոսում եյին հողի մասին, այդ նույն ժամին Բենոյի տանը հավաքված եյին նրա ընկերները՝ Վարթեանը, Պառավանց Սերգոն, Սրապը և Պողոսանց Յեղեկը: Քանի որ եր նրանք Բենոյի մշտական հաճախօրդներն եյին գտնել գնում-գալիս եյին, ասում-խոսում, խորհրդակցում: Այժմ յեկել եյին հատկապես իմանալու, թե ինչ պատասխան ե տվել գյուղիքորհրդի նախագահը հող տալու մասին:

Ու Բենոն ականջականերով գլխարկն առջեր՝ անափոց սեղանին գրած, պատմում եր, թե ինչ ե ասել նախագահը: Սեղանին գրած, հիսը ապակուն կպած փոքրիկ ձեռնալամպը հաղիվ եր լուսավորում մրոտ թոնրատունը, և ընայիծ եր գաղափառ կապահանց առաջի շուրջը բոլորած՝ հետաքրքիր լոր լուսավոր կապահանց:

— Գնացի, ախպեր, նախազի մոտ,—ասում
եր Բենոն առանձին գոհ դեմքով:—Ե՞ս իրեք
անգամ ա գնում եմ ու, պետք ա ասեմ, խելոք
տղա յեւ Մեր գեղացի ա, բայց խելոք ա. մի
քիչ ել, ըստում ա, հանաքչի ա: «Ինչ մագարիչ
կանես, ասում ա, Բենո, վոր քեզ լավ հող տամ»:
«Ինչ կուզես, ասում եմ, սերովնա, միայն թե
լավ հող ըլի»,.. Ասում ա՝ ջրի (գետի) կողքին
հին կազինի հող կա—են կտամ, մեկ ել՝ Սվե-
տանց Ահարոնի ու Սաղաթելանց Սողոմի կար-
տովատեղը, վոր իրար կողքի յեն»...

— Հա՞ խարածո, մոժնա, — ասաց Վարթե-
վանը, կարճ միրուքով մի գյուղացի, վոր ու-
սերին գցել եր մի հին բամբակած կիսավերար-
կու, դրա տակին հագել մի հին ժիլետ, վորի
տակից յերկում եր հին գունավոր շապկի կուրծքն
ու փեշերը: Նա խոսեց և, ուրախ ու հավանու-
թյուն տվող հայացքով, նայեց Բենոյին:— Հո-
ղերը՝ լավ հողեր են, ջրի ել մոտ...

— Հետո, — հարցը Երապը, վոր սուր դեմ-
քով յերիտասարդ եր, աչքի մեկը վորքը ինչ
ծուռ:


— Հետո յել ինչ: Իմ աչքի առաջ կանչեց
Սողոմոնին ու Ահարոնին ու ասաց, վոր կարտո-
ւատեղերն են տարի չվարեն:

— Բա նրանք ինչ ասին, — հետաքրքրվեց
Սերգոն:

— Թէ վողով ենք առել, եսպես-ենպես, մեր
ապրուստը եղ հողերն են, վեյնել ենք, բան:
Տիգրանը՝ նախազեն բանի տեղ չգրեց, «Դուք
ուրիշ հողեր ել ունեք, — ասավ, — իսկ դրանք մեզ
պետք են:

— Մալալեց Տիգրան, — ասաց Վարթե-
նը, — խարածո... Ուրեմն կոմունը գլուխ ա զալի:
Խարածո...

Վարթեանը իբրև նախկին պրատային կա-
ռապան, խոսելիս սովորաբար ուսւերեն եր խառ-
նում: Թեև յերկու-յերեք տարի յե յեկել եր գյուղ,
բայց իր սովորությունները դեռ չեր մոռացել.
հազնվում եր ելի կառապանի պես—յերկարաճիտ
կոպիտ կոշիկներ՝ կրունկներին ահազին մեխեր
խփած, վոր քայլելիս դրիկ-դրիխկում եյին. թը-
վում եր պայտած ձի յեր քայլում տախտակի
վրայով: Ուսերին միշտ գցում եր մի հին կիսա-
մուշտակ, հագնում եր հին ժիլետը, վորի տակից
յերկում եր հին գունավոր շապկի կուրծքն ու
փեշերը: Ու հետո՝ խոսում եր միշտ ուսւերեն
խառնելով: Հիմա յել վոր ուսւերեն խոսքեր եր ա-
սում, այդ մասամբ նրա համար եր, վորովհետեւ
Թիենոն Ռուսաստանից եր յեկել, ուզում եր այդ
հանգամանքը շեշտել: Այս ել պիտի ասել, վոր
նա ուսւերեն խառնում եր մեկ վաս տրամադ-
րության ժամանակ (հայհոյում եր ուսւերեն),



մե՛կ լավ տրամադրության միջոցին։ Իսկ այժմ լավ տրամադրության մեջ եր, վորովհետև «կոմունը» կազմելու պատճառներից մեկն ինքն եր... Չնայած յերկու-յերեք տարի առաջ յեկել եր գյուղ, մի լուծ յեզն եր առել, ապրում եր վար ու ցանքով բայց ամեն գարնան կարուության մեջ եր լինում, միշտ մնում եր առանց սերմի ու առանց հացի—կին ուներ, չորս յերեխա։ Առաջ, յերբ կառապան եր կախեթի Տրակուլ—ոռդիկն ուղարկում եր, կինը՝ ծայրը ծայրին եր հասցնում մի կերպ։ Բայց յերբ պոստային տրակտում կառքերը վերացրին ու նրանց տեղը ավտոմոբիլային յերթեեկություն հաստատեցին, վարթևանը մնաց անգործ։ Հայրոյեց ավտոմոբիլ հնարողին եր կառքերի տեղ ավտո մտցնողին ել ու յեկավ գյուղ՝ լիկվիդացիոն ստացած 120 ռ. ձեռին։ Նա յերբեք միանգամից այդքան գումար չեր ունեցել, և կարծում եր դրանով մի քանի տարի կապրի։ Բայց գյուղ գալով՝ տեսավ, վորորից գործ չի լինելու իր համար, պետք ե հողից հաց վաստակի, ուստի կնոջ խորհրդով, գրնեց մի լուծ յեզ ու զբաղվեց վար ու ցանքով։ Բայց հողի տվածը չեր հերքում, մինչև իսկ սերմն ել ուտում եյին։ Զեր ոգնում և այս, վոր նա մի յերկու շաբթով գնում եր վեց վերսափ վրա գտընդուղ փոքրիկ քաղաքը՝ յերկաթուղու համար աւ-

վազ կրելու։ Զեր, դժվար եր։ Այս տարի յել նա սերմացու չուներ, և յերբ Բենոն նոր յեկած ժամանակ խոսք բացեց իր ծառայած լազարեթի կողքի «կոմունի» մասին—Վարթևանն այդ միտքը շատ հավանեց։ «Բա եղանակ բան եստեղ չի կարելի սարքել»... Հիմա ուղախ եր, վոր սարքվում ե... Ուղախ եր և նրա համար, վոր Ահարոնի հողը խլել են. նա Ահարոնին չեր սիրում, վորված անցյալ տարի նրանից սերմ եր ուզել—չեր տվել։

— Վո՞ս խարառ՝, — ասաց նա սրտանց, չարախնդալով Ահարոնի հասցեյին։

Մյուս ընկերները լուս եյին. նրանք այնքան ել գոհ չեյին կարծես, վոր իրենց համար հողեր են խլվել, իսկ Բենոյի մայրը՝ պառավ Գայանը, վոր տախտի մի ծայրին ծալապատիկ նըստած, բրդի թել եր կծիկ անում, յերբ լսեց. վոր Սողոմի ու Ահարոնի հողերը վերցրել-տվել են իրենց տղերանց—անհանգստացավ։

— Վա՛յ, աման,— ասաց, — խալիսի հողերի հետ գործ չունեք։ Ահարոնն ըերանը Դարսի բահով ճղած ա. հորդ հանդիստ չի թողնի գերեզմանում...

— Եո՛ւ յեվո, — ձեռը թափ տվեց Վարթևանը, կարծես կառքի ձի յեր քշում, — թող խոսնի, եսքան տարի ինքն ա բանեցրել, հիմի յել

մենք սպավենք. կալ բուդու հոր տանիցն ա բերել եղ հողը...

— Ասում եմ անեծք չթափեն, — շարունակեց պառավը, — առանց են ել հաջողության տեր չենք: Կթշնամանան, ձեզ կֆսասեն... Հարուստ մարդիկ են...

— Հարուստ... Եստեղ որենք կա, թե չուրանի աշխամբը ա, — ասաց Սրապը: Հողը գյուղի սորհուրդն ամեզ տալիս, հո մենք չենք խլում, — շեշտեց նա, մեղքն իրենցից հեռացնելու ակներև նպատակով: Եղակս չի, Բենո, — ավելացրեց նա և, իր խոսքին հավանություն ստանալու համար, նայեց Բենոյին ու ընկերներին:

— Հալբաթ վոր մենք չենք խլել. մեզ տալիս են, մենք ել վերցնում ենք, — ասաց Սերգոն, նույնպես արդարանալու համար կարծես: Իսկ Յեղեկն ինչպես անխոս նստել եր, այնպես ել մնաց անխոն:

— Լավ կլիներ, իհարկե, անտեր հող տային, բայց վոր եղ են տալիս, ինչ անենք: ուսերը վեր քաշեց Սերգոն:

Վարթեանը խեթը նայեց Սերգոյին և ուզեց ինչ-վոր բան ասեր, բայց Բենոն թույլ չըտվեց:

— Լավ, թողնենք եղ, — ասաց նա, — դուք հիմի ես ասեք, թե յերբ պըտի վարն սկսենք:

— Առաջ մի մատաղ արեք, հետո, — խոսեց նորից պառավը, յերեսը խաչակնքելով: Մի գառն կամ մի ջուխտ աղունիկ... Արեք, վոր դորձներդ հաջողի...

— Առանց մատաղի ել յոլա կերթանք, — ասաց Սրապը, — մատաղը մեր ինչին ա պետք:

— Ասիլ մի, Սրապ ջան, — զլուխն որորեց պառավը: Իմ վողորմածիկը վնր տարին մատաղ չեր անում կամ կարկուտն եր թակում կամ չոր եր ըլում: Մի ասի. մատաղը լավ բան ա — աշապրի համար ել, անձրեկի, արտի համար ել...

— Անձրեկ, — ծիծաղեց Սրապը: Վոնց չի: Հենց հերու չեր, այ հոքիր, խաչը հանդը տարան, յատաղ արին, անձրեկի տեղ կարկուտ յեկավ...

Ախ, այդ Սրապը... Սիրում եր միշտ սրանց որան ծաղրել, վիրավորական խոսքեր առել ու չիծաղել:

— Մի որ ել կարկուտ կգա, Սրապ ջան, — ասաց պառավը հեզ, խրատական յեղանակով: Այց մատաղը յերկրի հովություն ա...

— Լավ, մերս, թող եղ մատաղը, — միջամնեց Բենոն, խոսքը կիսով չափ մորը, կիսով չափ նակերներին ուղղելով: Դու բուրջվական տեսակաից ես խոսում, մերս. եղ պրծել ա: Վշասեւում հիմի վոչ մի մատաղ չին անում:

— Դե հոքիրն ինքը մուլթ ելեմենտ ա, —
սաց Սրապը, կամենալով Բենոյից յետ չմի
«գրաբառ» խոսելու մեջ: — Ուզում ա, ամեն բա-
հնի պես ըլի: Եղ գնաց, հոքիր ջան, գնաց: Հի-
խորթային իշխանություն ա, հասկանում ես:

Ու Սրապը կրկին ծիծաղեց:

— Ինչ ուզում եք ասեք, — չհամաձայնեց ով-
ոավը: — Առանց մատաղի, առանց սերմ որշնելու
հատիկը գետին չեն դցիլ...

Տեմնելով իրեն լսող չկա, իրեն ծաղրու-
են, նա յերեսը շուռ տվեց նեղացած, ու ել չ-
խոսեց:

Ընկերները վորոշեցին հողը վարել գութիւ-
նով ու փոցխել: Վորոշեցին մի մասում ցոր-
ու գարի ցանել, մյուսում՝ գետնախնձոր ու բա-
ջարեղնն: Մի քանիսը բանջարեղեն չեյին ու
զում, բայց Բենոն համոզում եր, վոր դա ավել-
ոգուտ ե, վոր իրենց լազարեթի մոտի կոմուն վեզը յերկարած,
ել մեծ մասամբ կանաչի յեր ցանում ու լազ-
բեթին տալիս:

— Բա մենք ում պիտի տանք, — ասաց Սե-
րոն նեղացած: — Վոր լազարեթին: Եստեղ լազ-
բեթ չկա. Եղքան կանաչը մենք չենք ուտելու
առնող ել չի ըլի:

— Կծախենք, — ասաց Բենոն:

— Ում պիտի ծախենք, — համառեց Սերգ:

— Մի վախի. քաղաք կտանենք: Քաղաքի
մարդիկ հոգի յեն տալի կանաչի համար:

— Ե՛, առուտուր ել պիտի անենք, — զար-
մացավ Սերգոն. — Ենքան ըլի մեր հացը դա-
հերիք ա:

— Ինչ կա վոր, Վրասեյում եղակես չեյին
անում: Իրանց հացը-բանը ցանում եյին, կանա-
չին ծախում...

— Խելքս բան չի կտրում, — գլուխը թափ-
ավեց Սերգոն:

Ընկերները դեռ յերկար պիտի խոսեյին, յե-
թե Վարթևանը վեր չկենար և չհայտներ, թե ժա-
մանակն ուշ ե արդեն:

— Դե լավ, — ասաց, — վախտ ա անցկացել:
Խալին արդեն քնած են: Գնանք:

Վեր կացան: Սրապը մոտեցավ պառավին, կռացավ և,
ովուտ վեզը յերկարած, ծաղրածուի նման մի աչքը
կայեց նրան:

— Ավել-պակասը ներողութին, հոքիր ջան:
Ու ծիծաղեց:

— Ի՛, մասխարա, — ասաց պառավը, և նույն-
պես ծիծաղեց նրա ծամածության վրա:

Բենոն ընկերներին ճանապարհ դրեց մին-
չև բակի դուռը: Գարնանային պարզ, զրնգուն գիշեր եր:

Աստղերը ճրագ-ճրագում եյին բարձր, խոր յել
կնքում: Լեռները ծանր նստած՝ մրափում ել նրերը հաներ:
Հեռվում: Գյուղը քնել եր զրեթե վոչ մի լուս
մուտում լույս չեր յերեսում: Խաղաղ եր. միա
վարարած գետն եր թշշում ներքե, մեկ ել
մի շուն եր կենտահաչ տալիս յեղեղեցու կողմ
— Բարի գիշեր, Բենո:
— Բարի գիշեր, տղեք...

Ու Բենոն, աչքերով ընկերներին ճանա
պարհ քցելուց հետո, կանգնեց մի առժամ, և
յեց յերկնքին, ականջ զիեց ջրի ձայնին, շա
հաչոցին ու տարվեց մտածումներով: — Այ
շողվի վարեն, մեծ բերք ստանան — լավ կլնի: Կո
մաց-կամաց գործը կմեծացնեն, ձիեր կառնեն
ուրիշ սարք ու կարգ, ինչպես լազարեթի մոռ
կոմունը...

— Այ մերը մեռնի լազարեթի մոտի կո
մունի... Ինչեր ունեյին, — ասաց նա մտքում, «
հիշեց, պատկերացրեց նրանց ընդարձակ ցանք
սերը, նրանց գործիքները, տրակառը, նրանց
սպիտակ տները, վոր լուսափոր լուսամուտներ ու
նեյին և շրջապատված եյին ծառերով, ծաղիկ
ներով:

Մտածելով՝ նա գնաց տուն, ականջակալ
ներով գլխարկը կախ արագ սյունից, ապա հան
վեց ու մտավ անկողին, վորից հետո մայրը ճը
լազը հանգցրեց ու ինքն ել սկսեց հանվել:

Նա ամաչում եր վորդու ներկայությամբ
կնքում: Լեռները ծանր նստած՝ մրափում ել նրերը հաներ:

III

Շուտով գյուղում սկսեցին խոսել Բենոյի
հեռնարկության մասին: Սկզբում ասում եյին,
թե Բենոն ինչ-փոր գործ եւ ուզում անել ընկեր
ների հետ, բայց փող չունի, հետո յերբ հող ըս-
տացան, ասին, վոր Բենոն շատ փող ե բերել
Ուստաստանից և ուզում ե ցանքս անի, տուն
վինի, և վոր հող ստանալու համար՝ նա կաշա-
մասին առանձնապես խոսում եյին ժամի պատի
մասին առանձնապես խոսում եյին գյուղու-
տակ, ուր սովորաբար հավաքվում եյին գյուղու-
ցիները. իրար տեսնելու, զրուցելու, նորություն
իմանալու և նորություն հայտնելու: Գյուղում
թեև խրճիթ-ընթերցարան կար, բայց այնտեղ
գնում եյին միայն յերիտասարդներ, այն ել յե-
րեկոները՝ կազմք կարթալու կամ՝ մեկ-մեկ, քա-
ղաքից յեկածի լսելու: Գյուղի յերկրորդ ընթեր-
ցարանն ու ակումբը յեկեղեցու պատի տակն եր
կամ, ինչպես իրենք գյուղացիներն եյին ասում.
Ժամի պատի տակը, ուր հաճախ քննվում եյին
կամ ինդիքի խնդիրները, ուր ստեղծվում եր և հա-
յուղի խնդիրները, ուր ստեղծվում եր և հա-

Աստղերը ճրագ-ճրագում եյին բարձր, խոր յիլ
կնքում: Լեռները ծանր նստած՝ մրափում եյլ շ
հեռվում: Գյուղը քնել եր զրեթե վոչ մի լուս
մուտում լույս չեր յերեւում: Խաղաղ եր. միա
վարարած գետն եր թշշում ներքե, մեկ ել մ
մի շուն եր կենտահաչ տալիս յեղեղեցու կողմ
— Բարի գիշեր, Բենո:
— Բարի գիշեր, տղեք...

Ու ԲԵՆՈՒ, աչքերով լնկեթներին ճանապարհ քցելուց հետո, կանգնեց մի առժամ, նայեց յերկնքին, ականջ դրեց ջրի ձայնին, շահաչոցին ու տարվեց մտածումներով: — Այ հայ ջողվի վարեն, մեծ բերք ստանան — լավ կլնի: կամ մաց-կամաց գործը կմեծացնեն, ձիեր կառնեն ուրիշ սարք ու կարգ, ինչպես լազարեթի մոտ կոմունը...

— Այ մերը մեռնի լազարեթի մոտի կո
մուռնի... Խոչեր ունեյին, — ասաց նա մտքում, «
հիշեց, պատկերացրեց նրանց ընդարձակ ցանք
սերը, նրանց գործիքները, տրակտորը, նրանց
սպիտակ տները, վոր լուսավոր լուսամուտներ ու
նեյին և շըջապատված եյին ծառերով, ծաղիկ
ներով:

Մտածելով՝ նա գնաց տուն, ականջակալ
ներով գլխարկը կախ արագ սյունից, ապա հան
վեց ու մտավ անկողին, վորից հետո մայրը ճը
բազը հանգցրեց ու ինքն ել սկսեց հանվեր:

Նա ամաչում եր վորդու ներկայությամբ
որերը հանել:

III

Շուտով գյուղում սկսեցին խոսել Բենոյի
և ունարկության մասին։ Սկզբում ասում եին,
Եթե Բենոն ինչ-վոր գործ է ուզում անել ընկեր-
ութի հետ, բայց փող չունի, հետո յերբ հող ըս-
տացան, ասին, վոր Բենոն շատ փող ե բերել
Դուսաստանից և ուզում ե ցանքս անի, առուն-
ինի, և վոր հող ստանալու համար՝ նա կաշա-
ռել ե գյուղխորհրդի նախագահ Տիգրանին։ Այս
մասին առանձնապես խոսում եյին ժամի պատի-
տակ, ուր սովորաբար հավաքվում եյին գյուղա-
ցիները իրար տեսնելու, զրուցելու, նորություն-
իմանալու և նորություն հայտնելու։ Գյուղում
թեև լրճիթ-ընթերցարան կար, բայց այնտեղ
զնում եյին միայն յերիտասարդներ, այն ել յե-
րեկոները՝ կազիք կարթալու կամ մեկ-մեկ, քա-
ղաքից յեկածի լսելու։ Գյուղի յերկրորդ ընթեր-
ցարանն ու ակումբը յեկեղեցու պատի տպեն եր-
կամ, ինչպես իրենք գյուղացիներն եյին առում.
Ժամի պատի տակը, ուր հաճախ քննվում եյին
գյուղի խնդիրները, ուր ստեղծվում եր և հա-
սարակական կարծիք։ Տարվա բոլոր յեղանակնե-
րին այնտեղ եյին հավաքվում։ Պարապ ժամա-

նակու կիրակի որերը հավաքվում եյին գրելով վրա զծեր եյին քաշում մի բան հաշվելու կամ ամեքը, իսկ մասցած որերը՝ ծերերը։ ՅԵՎ սովորում եր ձեռնափայտին ու տարփում հուշերով։ Եյին և տեղն եր հարմար։

Ամեն մեկը համարյա իր տեղն ուներ ապ-
տեղ—մի-մի տաշած քար, վոր վերցրել ելի՝
հենց պարսպի գլխից ու շարել իրար կողքի, պա-
րսպի յերկարությամբ, իսկ մի քանիսը դրվա-
ելին զուգահեռ՝ դեմ առ դեմ նստելու համար
Մարդ կար սիրում եր կուրծքը դեմ տալ արե-
վին, մարդ ել կար—մեջքը: Իսկ ժամի պատ-
տակ արև—ինչքան ուզես, առավոտից մինչև կե-
սոր—արել գուրեկան խփում եր պատին: Դու-
բեկան եր մանավանդ ձմեռն ու վաղ դարնան...
Քարերը պատկանում եյին առանձնապես ծերե-
րին. յերբ նրանք չեյին լինում—դրանց վրա-
նստում եր ամեն մեկը—ով պատահեր: Իսկ բո-
լորովին ազատ ժամանակ ոգավում եյին յերե-
խաները. մի մասը վեգ եր խաղում, մյուսները՝
քարերին նստած՝ դիտում եյին ընկերների խա-
ղը, մինչև մայրերն սպառնալիքով կանչում եյին
նրանց կամ ծերունիներն եյին հավաքվում լուրջ
մտածկոտ դեմքերով, ձեռնափայտերով:

Նստում եյին նրանք քարերին՝ ձմեռը քուրքերով, ամառն արխալուղով։ Խոսում եյին վոմանք չիբուխ ծծելով, զոմանք ձեռնափայտերին դիմահար տփած, զոմանք ել ձեռնափայտերով հոները հանում եյին բերասսորդց կամ պատճեն կամ թրիկացնում գետնին։ Խոսում երը շարժում կամ թրիկացնում գետնին։ Խոսում եյին, վիճում, և հաճախ իրար ծաղրում, յերեսաների նման բերանները ծռելով։

Ժամի պատի տակ իր մշտական սեղն ուներ և թաթոս ամին: Առավոտյան հացն ուտելու հետո՝ գալիս և սև մեծ հատիկներով տերողոր մյան ձեռին նստում եր մինչև ճաշ, ապա ճաշին հետո, մինչև յերեկո: Նա, մյուս ծերերի նման տանը բան չեր անում: ամեն ինչ թողել եր ուղաներին ու հարսներին:

— Ի՞նչքան արել եմ, բոլ ա, հմի սրեն ձեր ա, — ասում եր ու դուրս գալիս տնից: Հետաքըրքվում եր թաթոս ամին ամեն բանով, ամենքի գործով. խորհուրդներ եր տալիս, իսկ ամենից շատ սիրում եր պատմել, թե ինչպես ինքը մի անգամ Որդուբաթ ե գնացել և ինչեր ե տեսել այնտեղ: Անզրագետների ցուցակագրության ժամանակ նա յել ցուցակագրվեց: Յերբ ծաղրում ելին, թե ի՞նչին ե պետք զիր սովորելը, հո գերեզմանում չպիտի կարդա, նա պատասխանում եր.

— Խի՞, շատ ել ծեր եմ. զիրը հո փոք չի ծակի: Փող հո չեն ուզում... Փող ուզեյին ուրիշան ա...

— Ախր, թաթոս ամի, — ասում ելին, — զիր սովորեցնում են, վոր քեզ ել բայլշեկ շինեն:

— Ի՞նչ կա վոր. թող շինեն, — պատասխանում եր: — Յես հլա կոսվորեմ, նրանից յեզր կը տենանք. զրից-կազեթից կերեա — բալշովիկը լավ

ա, բալշովիկ կդառնանք, լավ չի — մեր պապական հավատը կա ու կա ..

Սիրում եր թաթոս ամին միշտ նոր բան լսել և առաջինն ինքը պատմել ժամի պատի տակ: Բենոյի մասին ել առաջին անգամ նա պատմեց:

— Ասում են՝ Գայանի տղեն կոմուն ասարքում: Լսել եք, ա խալիս:

— Զե, — հետաքրքիր նրան նայեցին միքանի հոգի:

Թաթոս ամին սիրում եր գրգռել մարդկանց հետաքրքությունը, զրա համար մի յերկու խոսք ասում եր ու կանգ առնում, կամ վառվող չիբուշում եր ու կանգ առնում եր ու փստացնում: Այս խը զիտմամբ խառնում եր ու փստացնում: Այս անգամ ել նա չիբուխը տնտղեց ու գոհունակությամբ ծծեց մի բերան:

— Վոնց չի, հանեց չիբուխը բերնից: — Սողոմի ու Ահարոնի հողերն արդեն խլել-տվել են նրանց:

— Ո՞վ ասավ, — զարմացավ Բալոնց Գարսեվանը, վոր Սողոմի ինսամին եր (նրա աղջիկը Սողոմի հարսն եր):

— Յես եմ ասում, — շարունակեց թաթոս ամին հանգարատ: Վարթեանն ա ընկերը, լենը ուեխ Սրապը, ուրբաթախոս Յեզեկը, մեկ ել Պառավանց տղեն — Սերգոն:

— Իրար գտել, են,—ասաց Գարսևանը:
 — Յանի կոմունը վ՞րէն ա, զլուխը բարձրացրեց մի ծերունի դժգոհ։
 Թաթոս ամին խեթը նայեց նրան.
 — Բա եսքան ժամանակ եղ ել չդիտես, անայ...
 Ու բացատրեց։

— Դա են ա վոր՝ բոլորը միասին պըտի ըլեն՝ մի տան պես. իմ շորը դու հագնես, քունը՝ յես։ Սեփական ունենալ հարկավոր չի, վոչ ել կնիկ...
 Ծիծաղեցին։

Իսկ մի ուրիշ ծերունի, վոր մինչ այդ լուս նստած՝ չիրուխ եր ծծում աչքերը կկոցած, հանկարծ աչքերը բաց արավ ու չիրուխը հանեց ըերնից։

— Եղ վոնց կըլի, այ տղա, առանց կնիկ։
 Կով ա, բան ա, կերակուր յեփել կա։

Ասում են եղ կերակուր յեփել հեշտա, - շարունակեց թաթոս ամին։ Նոր մի կոցմոլի հետ խոսում ի. ասում ա՝ մի յերկու կնիկ կերակուր կեփեն՝ դեղը կուտի, վոնց վոր հարսանիքի ժամանակ։

— Պահ, - զարմացավ ծերունին,
 — Բա, — ասաց թաթոս ամին դոհ, վոր ինքն ամեն բան դիտի։

Հետո խոսեցին թենոյի մասին։ Այն կարծիքը հայտնեցին, թե տասը տարվա մեջ ոտար աեղեք ապրելով, ով գիտի ինչ հսարքներ, ինչ վատ բաներ ե սովորել։

— Յեթե բարի պտուղ ըլեր՝ ուրիշի հողը չեր վերցնի, ինչքան ել տային, — ասաց Բալոնդ Գարսևանը։ Սողոմի խնամին։

— Եղ գործն ել վոր սկսել ա, ով գիտի ինչ պըտի դուրս գա, - ասաց մի ջահել գյուղացի։

— Իհարկե. մի բան վոր տասը տեր ունենա, ենտեղից ինչ պըտի դուրս գա։ Հե՛ւ, - նորից միջամտեց Գարսևանը։

— Տուր ու դմիոց, - վրա բերեց նույն ջահել գյուղացին։

— Եղ լավ ասիր, — հավանություն տվեց թաթոս ամին։ — Տուր ու դմիոցից սավայի բան չի դուրս գալու։ Հարաքաշ-հերաքաշ...

Ու, խոսքն ընդհատելով, ձեռը ճակատին հովանի արած՝ նայեց դեպի ճամպեն։

— Հրե՛ւ, կարծես Ահարոնը գալիս ա... Նա չի...

Բոլորը լոեցին ու յերեսները դարձրին այն կողմը, ուր նայեց թաթոս ամին։

Յեկողն իսկապես Ահարոնն եր։

Ծանր-ծանր քայլերով, անարդար վիրավորվածի տեսքով, բայց արժանապատվությունը

պահելով, մոտեցավ ու անխոս-գլխով բարեեց հավաքածներին:

Քիչ առաջ խոսող ջահել զյուղացին վեր թռավ և քարն առաջարկեց նրան:

Հասարակ մարդ չեր Ահարոնը, առաջ դրացի հոգաբարձու յեր, յեկեղեցու յերեցփոխ, խանութ ուներ, մեծ տնտեսություն—տավար, վոչխար,—և զյուղի ամենալավ տունը նրանն եր: Ասում եյին՝ փող ունի. թէ վորքան—վոչփոք ճիշտը չեր կարող ասել. Սակայն ճիշտ եր այն, փոր գյուղում միայն նա ուներ քամող և ցորեն մաքրող մեքենաներ, փորոնք, իր կալը վերջացը-նելուց հետո, վարձով տալիս եր գյուղացոց: Նրա փողի մասին խոսում եյին մեկ ել այն պատճառով, փոր ամեն տարի դպրոցին մի 40—50 մա-նեթ եր տալիս: Այս ճիշտ եր:

— Նստիր, Ահարոն, նստիր, — ցավակից ձայնով առաց Թաթոս ամին:

Ահարոնը, վերաբկուի փեշերը հավաքելով, ծանր նստեց ու տնքաց:

Թաթոս ամին ուզեց լսածն ստուգել անմիշապես:

— Դրուստ ա, Ահարոն, ինչ ասում են, — թեքվեց նա գեղի Ահարոնը: — Քու կարտոլի տեղը վեր են գրել, համար:

Ահարոնը կուխը շարժեց, թեթևակի տըն-քալով:

Բոլորն իրար նայեցին: Ուրեմն ճիշտ է:
— Բա ի՞նչ ես անելու:
Ահարոնն ուսերը վեր քաշեց.
— Ի՞նչ պիտի անեմ: Կառավարություն ա,
դրավել ա...

Ու լոեց զուսպ շրթերն իրար սեղմած:
— Իսկ Սողոմն ի՞նչ ա անում, — հետաքըր-քըրվեց Գարսեանը՝ Սողոմի խնամին:
— Նա յել ինձ պես, չուզելով պատասխա-նեց Ահարոնը: — Կառավարություն ա, գրավել
ա, ինչ կարանք անենք...

Թաթոս ամին ուզում եր նոր հարց տար, բայց այդ բոպեյին փողոցում յերկաց Բենոն, և խոսակցությունը մնաց կիսատ:

IV

Բենոյին ու ընկերներին հատկացրած հողը լավ տեղ եր, հարթ տարածության վրա. մի կողմը սայլի ճանապարհն եր, փոր տանում եր վեց վերստի վրա գտնվող փոքրիկ քաղաքը, վորն ամառանոց եր միաժամանակ մյուս կողմից հո-սում եր Վարդաձորի գետը: Զրի մոտիկության պատճառով այդ տեղը կանաչ եր լինում վաղ գարնանից մինչև ուշ աշուն, և լավ ել բերք եր տալիս: Հողամասի մի ծալը գնում՝ գեմ եր առնում մի քարքարոտ ավազուտի, փոր հաճախ

յենթարկվում եր գետի հեղեղումին, մյուս ծայրը ճահիճ եր, ուր աճում եր մարդաբոյ յեղեցին ու ճիլը, և ուր գորտերը կոկում եյին վերջալույսից մինչև ուշ գիշեր... Գետի ափին ուռիներ կային՝ ջրի վրա կռացած, ծեր փչակավոր ծառեր՝ կաչաղակի ու ազուավի բներով. Նրանց շուրջը, և առհասարակ ափն ի վար և վեր՝ լիքն եյին ուռիների, մասրիների և փշենու թփերով, վոր խիտ, զրեթե իրար կպած՝ տարածվում եյին քմահաճ ու վայրի անկարգությամբ։ Վորքան ել գյուղացիներն ամեն աշնան կտրում եյին գրանք, մանավանդ ուռի թփերը, և ցախավել ու կթոցներ շինում, իսկ փշենու թփերով նորոգում եյին բռատանների ցանկապատերը, այնուամենայնիվ նրանք աճում եյին, խտանում տարածվում. վաղ գարնանից այդ թփուաները լցնում եյին ամեն ցեղի թոչուններ—արտուտներ, լորեր, ջրատոիկներ, ծտեր. յերբեմն սարյակները սև յերամով գալիս-իջնում եյին դրանց վրա՝ ճռուում-ճռվողում և մեկ ել տեղից պոկվում ու թը՛ռո... գետի մյուս կողմը։ Վոր ժամին ել անցնեյիք միշտ հավքեր կիջնեյին այնտեղ կամ կթոչեյին այնտեղից. վոչ թե մի կամ յերկու հատ, այլ խմբերով, յերամներով. իսկ ամառն այնտեղ՝ թեավոր յերաժիշտների համերգ եր շարունակ—սուլոց, մնչոց, ճռվող ու ծրվոց...

Ամառվա վերջերին և աշնանը, սակայն, մոտակա փոքրիկ քաղաքից յերբեմն վորսկաններ եյին դալիս այդ թփերը՝ իրենց շների հետ, և վերադառնում՝ վորսապարկերու լիքը լորով:

Այժմ գարունը յեռում եր արդեն, նա տաքացավ միանգամից, հանկարծ, մի պէշերվա մեջ. կարծես ինչ-վոր դուռ բացվեց և տաք գոլը փըչեց. ձյուներն արագ հալվում եյին դաշտերում, լեռնալանջերին. գետը հորդացած՝ թշում եր ավելի խուլ և հեղեղում քարքարուտն ու թփերը: Իսկ մերկ, բայց արդեն կարմրած ուռիները տարութերվում եյին ջըերի վրա և ազանորեն ծծում, կյանում արևի ջերմությունը:

ԲԵՆՈՆ ու ընկերները վորոշել եյին ծյունա-
հալից հետո, դաշտը բացվելուն պես, վարն ըս-
կաել: Բայց մինչ այդ, մինչև վարը՝ ԲԵՆՈՆ մի-
քանի անգամ գնաց քաղաք՝ ում-վոր հետ խոսե-
լու, խորհրդակցելու. թղթեր տարափ, թղթեր
բերեց, զյուղինորհրդում հաստատել տվեց, հետո
մի որ ել յեկավ, թե սերմացու յեմ ստացել և
զյուղատեսի հետ «խորհուրդ» արել, թե ինչ
պիտի անել: Դրանից հետո տղերքը, նրանց հետ
և ինքը ԲԵՆՈՆ, յերկու սայլ տարան, սերմացու
ցորենն ու գետնախնձորը բերին: Մինչև այդ,
այսինքն մինչև սերմացուն ստանալն ու տուն
բերելը, տղերքը, պետք ե ասած, չեյին հավա-

տում Բենոյին, թե վարկով սերմացու կտան իրենց, բայց յերբ ստագան ու տուն բերին, Սերդոն կասկած հայտնեց, թե՝

— Զըլի, այ տղա, եստեղ մի քյալագ կա...

— Ի՞նչ քյալագ, — խեթեց Վարթևանը, կարծես նրա կասկածանքից վիրավորված:

Վարթևանը գլուխն որորեց անխոս:

Յեղեկն ու Սրապը նույնպես կասկածի մեջ ընկան այդ խոսքերից. բայց Յեղեկը բարփոք համարեց լուել, իսկ Սրապն, ինչպես միշտ, չկարողացավ իրեն պահել.

— Հլա տեսնենք, — ասաց, — կամ տակ կը լենք, կամ գլուխ...

Ու ծիծաղեց՝ սուր դեմքն ողի մեջ ցցած:

Այս այդ Սրապը... Սիրում եր ամեն բան հեղներ ամենքի վրա ծիծաղել, յերբեմն ել առանց վորե և պատճառի:

Ինչ և ե: Յերբ ձյուները հալվեցին, դաշտը չորացավ ընկերներն սկսեցին հողը գութանել: Գութանում լծում եյին չորս լուծ յեղը, այսինքն ամեն մեկն իրենը, բացի Բենոյից, վոր լծկան չուներ (վրա փոխարեն, պայմանի համաձայն, պետք ե «կոմունի» գործը տաներ): Քանի վոր յեղների մասին խոսք յեղալի պետք ե ասել, վոր բոլորի մեջ աչքի եյին ընկնում Յեղեկի յեղները՝ թե իրենց խոշորությամբ և թե գեղեցկու-

թյամբ ու մաքրությամբ: Դրանք պինդ, բարեկազմ և ուժեղ յեղներ եյին՝ մազները փայլուն, յեղջուրները մեծ ու վոլորուն: Ասում եյին, վոր Յեղեկը շաբաթը մի անգամ լվանում-լողացնում է նրանց և ձեթ քսում: Այս, Յեղեկը յեղներին շատ եր սիրում, և աշխատում եր վորքան կարելի յե գեղեցկացնել. զրա համար զգներին կախում եր հուլունքներ և դաղած նախշերով կլոր փայտեր, իսկ հեռու տեղ գնալիս՝ բոժոժներ ու զանգակներ: Այդ պատճառով Վարթևանը, յերեխ իր կառքի ձիյեռը հիշելով, և իրեն, իրըն նախկին կառապան, վիրավորված զգալով, հաճախ ծաղրում եր Յեղեկին.

— Յեղան Փայտոն ա լծել... Ասա՝ բոժոժներն ինչի՞ յես կախել...

Յեղեկը դրանից չեր վիրավորվում և շարունակում եր իրենը: Ասենք գուցե և վիրավորվում եր, բայց վոչինչ չեր արտահայտում, վորովհետև զարմանալի լուակյաց մարդ եր, վորի համար և նրան անվանում եյին «ուրբաթախոս Յեղեկ»

Այժմ այդ «ուրբաթախոսն» եր գութանի մաճը բռնում, վոր, ըստ յերկույթին, բոլորից հմուտ եր: Մյուսները, նրանց հետ և Բենոն, քշում եյին յեղները կամ հողի գլխին, փոխեփոխ, փայտե որբիչով մաքրում խոփին ու ձեփշին

կպած խոնավ հողը։ Ամենից շատ աղմուկ հանում և ձեռին փոտին եր անում վարթեանը. նա բամբակած կիսավերկուն նետել եր մի կողմ և միայն ժիլետով, վորի տակից, ինչպես միշտ; յերկում եր հին գունավոր շապկի կուրծքն ու փեշերը, քշում եր այս կամ այն լուծը, ձայնով ու ձեռներով խրախուսում տղաներին, կամ մաճկալի մոտ գալով՝ նայում—լավ ե վարում արդյոք գութանը, հո յերես չի վերցնում։

— Պետք ա վորքան կարելի ա խոր վարեր, խոր, — ասում եր նա հեղինակավոր տոնով, յենթալրելով յերեկի թե մյուսներն այդ չեն հասկանում։

Ու մի յերկու քայլ առաջ գնալով՝ ձայն եր տալիս Բենոյին, Սրապին ու Սերգոյին.

— Քշեցէք, տղեք, քշեցէք...

Կամ այնքան վոգեռվում եր, վոր սկսում եր ոռւսերեն.

— Գանի՛ յեվո, Մրապ, զանի՛...

Ու ինքը յերկար կակուղ ճիպոտը վրա եր բերում առաջին պատահած յեղանը.

— Նո՛ւ, խալերա...

Յեզ յեղները նրա ձայնից, նրա հարվածներից, լարվում եյին ու ձիգ տալիս։

Մյուսները՝ վոչինչ բայց Սերգոն չեր սիրում վարթեանի այդ վարմունքը. ամեն անդամ

յերք նա ճիպոտը ձեռին մոտենում եր իր յեղներին, Սերգոն հոնքերը կիտում եր ու շրթունքներին հուսական տալիս։ Ինքը յերբեք յեղներին նեղություն չի տալիս, իսկ վարթեանը ճիպոտը և աջ ու ձախ—դա արդեն վրդովում եր նրան։ Միքանի անդամ համբերեց, բայց մի որ ել չը կարողացար իրեն զսպել.

— Հերիք ե, վարթեան։ Աչքդ հետ իմ յեղներին ա տեսնո՞ւմ։ Ի՞նչ ես գնում գալի հայտալի...

— Լավ, լավ, չեն սատկի, նեղացավ վարթեանը, — մենակ քունոնց չեմ խփում, նեուծելի...

— Ավելի լավ ա, ամեն մարդ իրանը քշի—ասաց Սերգոն, ու առաջին լուծը թողնելով՝ յեկալ իր յեղների մոտ։ — Սրանք փոշտի ձիանք չեն, վոր առաջ դնես ու քշես։

Ակնարկը վարթեանին վիրավորեց։

— Ի՞նչ ա, յեզը փոշտի ձիուց լա՞վ ա, — ասաց նա շախը կոտրած։ Վոր նեղանում ես—ել քու յեղներին չեմ մոտենա...

Բենոն, վոր սկզբում լուս, ծխամորճը բերնի մի անկյունում, հետեւում եր նրանց խոսակցության, համարելով դա մի տեսակ հանաք, բայց հետո տեսնելով լուրջ ընթացք ե ընդունում այն—կարեռ համարեց միջամտել.

— Դե լավ. սա հո բուրջվական բան չի,

վոր կռվում եք: Ընկերովի բան ա... ել ի՞նչ
բանվորա-զյուղագիական տղեք եք, վոր չեք ու-
զում միջազգային մասշտաբով աշխատել...

Ու գլուխը տարուբերեց նեղացած:

Իսկ Սրապը պատահարը վոչինչ բան համա-
րելու նկատումով՝ հոռովել տվեց:

Լավ ձայն ուներ Սրապը—զի՞ւ, դողանջնդի:
Յերբ հոռովել եր տալիս՝ ձայնը յելեջներով ու-
արձագանքներով կրկնվում եր հեռվում—չո՛ո՛...
Յեվ ամեն անգամ, յերբ նա հոռովելը վերջա-
ցնում եր, Վարթևանը բացականչում եր միշտ.

— Մալադեց, Սրապ, մալադեց...

Սրապը փառասեր տղա յեր և ինքն իր մա-
սին մեծ կարծիք ուներ. նա հպարտանում եր իր
ինոջով ու ձայնով: Վարթևանի խոսքերից փքվում
եր իսկույն, կոկորդը մաքրում և նորից սկսում
ավելի զիլ: Բայց այս անգամ, յերբ Սրապը հո-
ռովելը վերջացրեց, Վարթևանը, հակառակ սովո-
րության, վոչինչ չասաց:

Նա, ըստ յերկույթին, կարգին վիրավորվել եր:

Նրա աշք-ունքը բացվեց այն ժամանակ մի-
այն, յերբ կանայք ճաշի կերակուրը բերին:

Բերում եյին սովորաբար քաշովի, կաթնով
կամ թանով ապուր: Բերում եյին հերթով, մի
շոր փոռում գետնին և ամաններն ու հացը շա-
րում վրան:

Այս անգամ հերթը Սրապի կնոջն եր, բայց
նրան ընկերացել եր և Յեղեկի կինը, վորը մո-
տիկ հարևան եր:

— Լավ, յեկեք թաթախվենք,—ասավ Վար-
թևանը, ու սապոգիներով լոք տալով՝ գնաց դե-
պի կերակուրը:

Նրան հետեւցին Սրապը, ապա Բենոն, Սեր-
դոն, իսկ ամենից վերջը—«ուրբաթախոս» Յեղեկը:

Յեվ այդ որվա միջադեպը այդպես ել վեր-
ջացավ:

Վարը տեսեց յերկու շաբաթ. դրա մի որը
կերակի յեղափ, մի կեսօր ել նստեցին արձրեա-
խափան: Հողը լավը եր—սև, փարուն, Վարթևա-
նի ասած՝ «Փլափի պես» ցըիվ եր գալիս: Բայց,
չնայած դրան, յերկաթե փոցխով փոցխեցին, վոր
դար ու փոսերը հարթվեն:

Ամենից առաջ ցանեցին գարին ու ցորենը:
Սերմը գցեց Վարթևանը: Վորքան ել վաղուց
կտրված եր եղել վար ու ցանքից, այնուամե-
նայնիվ կարողանում եր լավ սերմել: Մի ահա-
գին քաթանե գոզնոց կապած, հաստ սապոգները
հագին՝ զնում—գալիս եր ցելի միջով և յերկար
ձեռը տանում-բերում:

— Հոփ-հա, — ասում եր նա իրեն աշխուժի
բերելով, ու սերմը շաղ տալիս:— Մալադեց, Վար-

թեան, մալոդեց,—գոռում եր նա ինքն իրեն ու
լոքերը փոխում։

Վորքան համոզեցին, թե սապոգները ծանր
ե, սերմ գցելիս կհոգնի, լավե բորիկ կամ տրեխ-
ներով—չսեց։

— Յես բորիկ սովոր չեմ, բրատեց մոյ, վոչ
ել տրեխով...

Տղերքը նրա յետելից տափանում եյին զույգ
տափանով։ Մեկի վրա Սրապն ու Բենոն եյին,
մյուսի վրա Սերգոն և Յեղեկը։ Սրապն, ըստ սո-
վորության, անխոս չեր մնում—ծիծաղում եր
սրանրա վրա կամ հոռովել տալիս։ Մերգոն յեր-
բեմն ձայնակցում եր նրան, Յեղեկը լուսում եր,
իսկ Բենոն՝ քթի տակ մոմուում եր ինչ-վոր, վոր
դժվար եր հասկանալ—յերդ եթե մի ուրիշ բան։
Յերբեմն ել յերը ընկերները վիրավորական խոսք
եյին ասում իրար, հակառակում կամ նեղանում,
նա միջամտում եր անմիջապես։ «Հերիք ե բուրժ-
վական բաներ անեք»...

Կամ՞ «Հանդիսատ, տո, միջազգային մաշտա-
բով աշխատեք, ինչ եք կովում»...

Ընկերները «բուրժվական բանը» և «միջազ-
գային մաշտաբը» չեյին հասկանում, բայց զում
ելին, վոր իրենց նկատողություն ե անում, և
վոչինչ չեյին ասում։

Դարու և ցորենի ցանքուր տեսց յոթ որ

և բոնեց հողամասի կեսը, ավելի շուտ յեղած
սերմացուն հազիվ հերքեց-կիսին, իսկ մյուս կե-
սում Բենոն ուզում եր ցանել գետնախնձոր ու
բանջարեղեն—կաղամբ, բողկ, սոխ, պամիղոր և
այլ այսպիսի բաներ։

Տղերքը համաձայն չեյին. ամենից ավելի
Սերգոն,

— Տավար Ենք ինչ ե, — ասում եր նա։—
Երբան կանաչը ինչներիս ե պետք։ Պամիղորը
բո՛ղկ։ Դրանք քաղաքացու բաներ են...

— Բենոն ուզում ա հալբաթ մենք ել քա-
ղաքացի դառնանք, — ասաց Սրապն ու ծիծաղեց
Ա՛խ, այդ Սրապը...

— Մենք ել քաղաղացու կտանք, ասաց
Բենոն, առանց Սրապի ծաղրին ուշ գարձնելու։—
Յեթե մուաց՝ հարյուր տոկոսով պատասխանա-
տուր եմ։

Մերգոն գլուխն որորեց։
— Այ եսոր-եգուց քաղաքը դաշնիկով կլըց-
վի, կտանենք—կծախենք, — շարունակեց Բենոն։
Տղերքը լուսում եյին, բայց Սերգոն գլուխն
որորում եր ելի.

— Դու ասա առնեն։

— Հնենց կառնեն՝ քեֆդ գա, — ասաց Բե-
նոն։ — Դու քաղաքացուն կանաչի տուր—ծիու-
պես կուտի։

— Եղ մեկը գրուստ ա,—ասաց Վարթեանը:
— Միենույն ա ձեռը թափ տվեց Սերգոն, —

ինձ կանաչի պետք չի: Հողն ել ե ափսոս, վարն ել...

— Դու գիտես, — ասաց Բենոն: — Գյուղա-
տընտեսն ինձ սերմարանք ե խոստացել, եզուց
գնում եմ բերելու...

Ու խոսակցությունը սրանով վերջացավ:

Յեվ մյուս որը Բենոն խսկապես գնաց քա-
ղաք, Սերգոն, նրա բացակայությամբ, աշ-
խատեց համոզել ընկերներին, վոր կանաչին ա-
վելորդ ե, գիխացավանք: Ավելի լավ չե մնացած
տարածությունն ել ցորեն ու գարի ցանեն:

— Ախր ասում ա «ոգուտ ա»: յես ել կար-
ծում եմ՝ եղպես ա, — առարկեց Վարթեանը:

— Այ տղա, խալին ախր կծիծաղեն մեղ
վրա: Ժամի պատի տակ հլա տես ինչե՞ր են ա-
սում, — շարունակում եր Սերգոն, համոզելու
ցանկությամբ:

Վարթեանը չեր համոզվում: Յեղեկը կամ
լուսում եր կամ անորոշ հնչյուններ արձակում:
Չգիտես կողմանակից եր թե գեմ: Նա, խսկապես,
աւատանվում եր — ցորենն ե լավ թե բանջարե-
ղենը: Ինչ վերաբերվում ե Սրապին — նա միշտ
հանաքով եր պատասխանում: Նրա համար կա-
րենոր ցանած ցորենն եր. մնացածից՝ բան դուրս
կգար — լավ. դուրս չեր գա: — վշտանալու բան չեր:
Ու ծիծաղում եր.

— Եհ, լավ: Կամ տակ կը իմնենք կամ գլուխ...

V

Բենոն քաղաքից վերադարձավ, հետը բերե-
լով թղթե բազմաթիվ մանր ու մեծ տոպրակներ.
ամեն մեկի մեջ մի տեսակ սերմ — կոտեմ, բողկ,
սոխ, ոեհան... Դրանք ցանելուց հետո՝ պիտի բե-
րեր պամիգորի և կաղամբի շիթիներ:

— Գյուղատնտեսը խոստացել ա, — ասաց:

Յեվ այսուհետեւ մի քանի որ, մի շաբաթ և
ավելի մարգեր եյին շինում ու ցանում: Տղա-
մարդիկ յերկար քառակուսի մարգեր եյին անում,
կանայք ճերմակ գլխաշորերը յերեսներին հովանի
արած՝ ցանում եյին կուցած: Բենոյի պառակ
մայրը՝ Գայանը նույնպես մասնակցում եր և սո-
վորեցնում ջահեներին, թե ինչը ինչպես պիտի
ցանել:

— Յերբ վողորմածիկս կենդանի յեր, — ա-
սում եր նա ջրակալած աշքերով, յես ամեն բան
ել ցանում ի...

Մարդերում ցանում եյին սոխ, կոտեմ, ոե-
հան և ուրիշ շուտ հասնող կանաչեղեն, խսկ թըմ-
բերին՝ տարեկան ու ամսական բողկ, արևածա-
ղիկ, սիմինդ:

Տարեկան՝ բողկը ցանելու ժամանակ պա-
ռակ Գայանն այս կարծիքը հայտնեց, թե շուտ
և դեռ:

— Մինչև ամպը չգոռա, տարեկան բողկը ցանիլ չեն—կվշվի: Թողեք Յեղիական պասը դա—նոր:

— Բուրջվական բան ա, — ձեռը թափ տվեց Բենոն: — Մեր լազարեթի մոտ ամենից շուտ բողկն եյին ցանում, հիմի...

Սերգոն մեծ դժկամությամբ եր մասնակցում այդ «մանր բաները» ցանելուն, կամ գրեթե չեր մասնակցում: Բո՞ղի կոտեմ, սո՞խ... Ու գլուխն որորում եր շարունակ և հաղիվ զսպում իրեն, վոր վատ բան չասի կամ չկուվի,

Սակայն, նա իրեն զսպել չկարողացավ գետնախնձորը ցանելու ժամանակ, և բանը վատ հետեանք ունեցավ...

Յերեակայեցեք, Բենոն ուզում եր գետնախնձորը կիսել ու՝ կտոր-կտոր կամ ուղղակի կեղեք ցանել...

— Կարտոլի կլեպը, — բացականչեց Սերգոն: — Մեզ տավարի տեղ ես դրել ինչ ա...

— Ե՛ դուրս կդա վոր, — կասկած հայտնեց Սրապը:

— Այ կանեմ—կտենաք, — ասաց Բենոն: — Մեր լազարեթի մոտ ել եղպես եյին անում...

Ու նորից սկսեց զանակով մանը գետնախնձորները կիսել, իսկ ավելի մեծերի կեղեք վերցնում եր ու միջուկը դնում մի կողմ:

— Աս եւ ընը՛, կարող եք կերակուր եփել... Սերգոն մի քիչ հեռու նստած, հոնքերի տակից իր մանը ու սուր աչքերով նայում եր նրան, գլուխն որորում, տնքում: Նրան վրդովում եր վոչ միան Բենոյի արածը, այլև այն հանգստությունը, վորով անում եր այդ գործը: Թվում եր նրան՝ դիտմամբ, իրեն բարկացնելու համար ենանում:

Նայեց Սերգոն նրան, նայեց ուշադիր ու համառ, յենթազրելով թե իր դժոհության պատճառով, իր հայացքների ազգեցության տակ՝ Բենոն վերջ կտա դրան: Բայց իզուր. նա շարունակեց առաջվա պես հանգիստ, բնավ ուշ չդարձնելով Սերգոյին...

Այդ ժամանակ ահա Սերգոյի բարկությունը յեկավ, նա յել չհամբերեց—յելավ տեղից, յերկար վոտներով կանգնեց նրա առաջ այն լուրջ ու վճռական գիրքով, յերբ ուզում են բացատրվել կամ մեկին մի բան հասկացնել:

• Դու ուզում ես ուրեմն մեր աշխատանքը ջուրն ածես ելի, — ասաց զսպված բարկությամբ:

— Պատասխանատուր եմ հարուր տոկոսով:

— ասաց Բենոն, առանց նրան նայելու:

— Ախը հասկանում ես ինչ ես անում,—

տաքացավ Սերգոն:

— Առանց հասկանալու չեմ անում,— ասաց Բենոն:

Ու գլուխը կախ շարունակեց գործը:
— Թէ՛ ուզում ես խայտառակվենք:
— Պատասխանառութ եմ 100 տոկոսով...
Սերգոն խեթը նայեց նրան ու հանկարծ՝
— Պատասխանառութ եմ,—տնազեց, բերանը ծռելով:—Բան ա սովորել: Ամեն շաշություն անես, թե պատասխանառութ եմ:
Բենոն կարմրեց.
— Շաշը դռւ ես:
— Բա վոր շաշ չլինես՝ եղանակ բան կանես:
Դրա համար ե խալսը մեզ վրա ծիծառում:
— Իսկ դու մութ ելեմենի ես, վոր եղանակ բաները լսում ես,—բարկացավ Բենոն:
— Ելեմենը դու յես, —ձայնը բարձրացրեց
Սերգոն, — Դրա համար ելին ասում, վոր մեզ փորձանքի մեջ ես գցելու: Եղանակ ել յեղավ: Կարտով կոսորում ա, թե դուրս կգա: «Պատասխանառութ եմ», — կրկնի տնազեց նա, բարկությունից հեալով:

Նրանց ձայնի վրա՝ տղերքը գործերը թողին ու մոտեցան նրանց: Նույնն արին և կանայք: Սերգոյի կինը, մարդու բարկացած ձայնը լսելով, առաջ յեկավ հետաքրքրված ու անհանդիսա: Քիչ հետո բոլորը շըշապատեցին նրանց և աշխատեցին վերջ տալ այդ խոսակցության, վոր հետք հետեւ անհարմար ու անհաճո եր դառնում: Բայց

քանի միջամտում ելին, համոզում—Սերգոն ավելի յեր տաքանում: Վերջը՝ հասավ այստեղ, վոր հայտարեց:
— Զեմ ուզում, չեմ ուզում: Զեր վո՞չ լավն եմ ուզում, վո՞չ վատը: Իմ աշխատանքի հախը ավեք—հեռանամ:
— Դուռակություն մի անիլ—ասաց Վարչ թևանը:—Նեռութելի չես հասկանում, վոր եղանք չի ըլի: Սպասի հլա, կարտոլ ա, կցանենք—դուրս չի դա—են ժամանակ խոսի:
Յեվ առհասարակ Վարթևանն աշխատում եր, հաշտատար լինել: (Նա ինքն ել կասկածում եր, կիսած գետնախնձորը կամ նրա կեղեց կարող ե դուրս գալ, բայց լուսում եր, մտածելով, թե Բենոն, աշխարհ տեսած մարդ ե, մի բան գիտի յերկի): Նրա հորդորները, սակայն, չազգեցին Սերգոյի վրա:
— Զեր կլեալի կարտոլը չուզեցի, ախալեր, — ձեռը թափ տվեց նա:
Վեճին միջամտեց և Սրապը:
— Դե վո՞նց մենք, ենենց ել դու, — ասաց նա կատակով:—Ի՞նչ ես դարդ անում, կամ տակ կը նենք, կամ գլուխ:
Ու ելի ծիծաղեց... Ալս, այդ Սրապը:
— Կուզեք տակ ելեք, կուզեք գլուխ, — շարունակեց Սերգոն իրենը:— Զեմ ուզում...

Խոսեցին ելի տաքացած։ Բենոն իրենն ասավ,
Սերգոն՝ իրենը։ Տղերքը համոզեցին Սերգոյին,
վոր հեռանալու մասին շխոսի, դա լինելու բան
չի, չեն թողնի. բայց Սերգոն իրեն այնքան վի-
րավորված եր զգում, վոր վոչինչ լսել չեր ու-
զում. ու պահանջում եր, վոր աշխատանքի վար-
ձը տան անպատճառ, և հիմա։

— Մինչև բերքը քեզ բան չենք կարող
տալ — հայտարարեց Բենոն։

— Յես հիմա յեմ ուզում։

— Չենք կարող։

— Չեք կարո՞ղ...

— Չե։

— Դե լավ, — ասաց Սերգոն գլուխը թափ
տալով։ — Հետո չփոշմանեք — Ու յերեսը շուռ
տվեց, — Նարգիզ, — կանչեց նա կնոջը, — գնանք...

Ու յերկար լոքերը գցելով հեռացավ։ Նը-
րան հետեւ և կինը՝ նարգիզը, փեշերը կարգի
բերելով և նրանց վրայից հողն ու փոշին թափ
տալով։

Յեվ այնուհետև, վորքան ել ընկերները հա-
մոզեցին նրան՝ վերադառնալ չուզեց։

— Հարկավոր չի...

Սերգոյի հեռանալը վաստ ազգեց ընկերնե-
րի վրա, բայց Բենոն բանի տեղ չդրեց և շա-

րունակեց իր գործը։ Ցանեց գետնախնձորն իր
ասած ձևով, թե «Վրասեյում ել եսպես են ցա-
նում»... Տղերքն իհարկե, կասկածում եյին, բայց
չուզեցին բան ասել. կարիք չկար գրա համար
կոիվ սարքելու, մանսավանդ վոր բոլորն այդպես
չեր ցանված, այլ կեսը, ավելի շուտ՝ կեսից պա-
հաս։ Դուրս կգար—լավ, դուրս չեր գա—տեղն
ուրիշ բան կցանեյին։

Սկզբում այսպես եյին մտածում տղերքը,
բայց յերբ գյուղում սկսեցին խոսել կեղեց ցա-
նելու և Սերգոյի հեռանալու մասին, նըրանց ան-
հանգստացրեց գյուղացիների խոսակցությունն
ու հեգնանքը, վոր ամեն պատահելիս — ժամի
պատի տակ թե մի այլ տեղ — հարցնում եյին
քմծիծաղ։

— Հը, ձեր կլեալը վհնց ա...»

— Շատ լավ ա, — ասում եյին տղերքը հը-
պարտ, բայց ներքին մի կասկած անհանգստաց-
նում եր նըրանց, և այդ պատճառով գրեթե ամեն
որ՝ ջոկ-ջոկ կամ միասին նայում եյին գետնա-
որի ցանքը — ծլում եր արդյոք։ Նըրանք
խընձորի ցանքը — ծլում եր արդյոք։ Նըրանք
վախենում եյին՝ հանկարծ բան չդուրս գա ու
խայտաւակվեն։ Յեվ սրտանց ցանկանում եյին,
խայտաւակվեն։ Յեվ սրտանց ցանկանում եյին,

գուման ահ սրտներում, զնում-նայում եյին գետնախնձորի ցանած տեղերը ու տարակո սած գլուխները շարժում։ Յերբեմն նույնիսկ մատով քանդում եյին հողը—վոչինչ չեր յերեռում։ Մի որ ել—հանկարծ, անսպասելի—տեսան հողից դուրս յեկած վարդենու ընձյուղների պես կարմիր ծիլեր։ Վարթեանն ուրախությունից բացականչեց.

— Վո՞ս մալադեց։ Դուրս ա յեկել, Սրապ։ Սրապը մոտ գնաց և զլուխը շարժեց թերահավատ։

— Եղ հլա ծիլն ա, տեսանք բան կրոնի՞ վոր…

Յեղեկն, ինչպես միշտ, լուռ եր և ավելի կասկածու։ Բայց և այնպես այդ խավոտ, վարդագոյն ծիլերը հանգստացրին թէ նրան թէ մյուսներին։

Առաջ պակաս անհանգիստ չեր և ինքը թենոն։ Նա յել ընկերներից ծածուկ, մեկ-մեկ նայում եր ցանածը—դուրս չի գալիս արդյոք։ Բայց յերբ ծիլերը հողի յերեսն յելան - հանգըստացավ, և այլես բերան չեր բանում, յերբ խոսք եր լինում դրանց մասին։ Ծիամորճը դնում եր բերնի մի անկյունն ու ծխում։

Մի առժամանակ գետնախնձորն այնպես եր գրավել նրանց, վոր մյուս բաներին ուշ չեյին

դարձնում այնքան։ այն ինչ՝ գետնախնձորից շատ առաջ ծլեցին արտերը՝ գարին, ցորենը… Մարգերում ամենից շուտ բուսեց կոտեմը ու մամուռի պես ծածկեց հողը, հետո ամսական բողկը խլշեց գույզ ականջները, ապա ասեղի պես հողից դուրս ցցվեց սոխը՝ սերմի հունդը զլիխն… Հետո կամաց-կամաց մյուսները, և կարձամանակում մարգերի ընդարձակ տարածությունը ծածկվեց կանաչով։ Լավ եր. տղերանց դուր եր գալիս այդ նորածիլ, թարմ կանաչը, սակայն, ինչպես առաջ, այնպես ել հիմա նրանց մտահոգում եր այն, թե ինչ պիտի անեն այդքան կանաչին, ինչպես պիտի թենոն այդ բոլորը ծախի… Այդ նրանց թվում եր բարդ ու գրժվարին մի բան… Ու կասկածով հիշում եյին գյուղացիների խոսքերը թենոյի մասին, մանավանդ Սերգոյի խոսքերը, վոր հիմա յել՝ պատհելիս ասում եր, թե թենոն խարելու յե, ով գիտի ինչ թուղթ ե ստորագրել սերմ ստանալիս, ինչ պարտքի տակ ե ցցելու իրենց… Յեվ հետո, ապրանքը քաղաք տանելիս՝ կծախի ու կես գինը ցույց կտա (իզուր չե քաղաքներում ապրել)… Դե, այն ժամանակ արի դու և հաշիվ պահնջի…

— Այ տղա, իմ մտքովն ել ա եղպես բան անցկացել—ասաց Սրապը մի որ Վարթեանին։

— Դե, լավ, չար բաներ մի մտածի, — թափ
տվեց գլուխը Վարթևանը:

— Շան հետ ընկերացի, փետը ձեռիցդ մի
զցի, — ասաց Սրապը բազմախորհուրդ:

Ու ծիծաղեց... Այս, այդ Սրապը:

Մինչ այդ յեկավ առաջին քաղհանի ժա-
մանակը: Կանայք, Սրապի կինը՝ Զանանը, Վար-
թևանի Մարջանը՝ դեմքին մազեր դուրս յեկած,
հաստաթիկունք մի կին, վոր յերկար տարիներ՝
մարդու բացակայության պատճառով, տղամար-
դու բան անելով՝ տղամարդու տեսք եր ստա-
ցել և ման եր գալիս վոտարոբիկ. հետո, Յեղե-
կի մայրն ու կինը, յերկուսն ել Յեղեկի պես
սակավախոս. դրանց հետ և Բենոյի մայրը՝ պա-
ռավ Գայանը՝ առավոտից մինչև յերեկո աշխա-
տում ելին մարգերի վրա կրացած, ինչպես շո-
գից գլուխներն իջեցրած վոչխարներ: (Իմիջի այ-
լոց՝ պառավ Գայանը այծն այլևս տավարածի
առաջը չեր անում, այլ վիզը մի յերկար թող
դրած՝ բերում-կապում եր բոստանի մոտ ու
ինքն ըզբաղվում քաղհանով): Քաղհանը շատ եր
և շատ ել աշխատանք եր պահանջում: Զանենե-
րը հաճախ պառավերին թողնում եյին մենակ
ու առանձնանում, վոր ազատ խոսեն և նկատո-
ղությունից ու խրատից հեռու լինեն: Պառավերին
այդ նկատում եյին, ինարկե, և չտեսնող ձեռ-
նում:

— Զահել են, թող խոսեն, — ասում եր Գա-
յանը Յեղեկի մորը:

Ասենք՝ Վարթևանի կինն այնքան ել շահել
չեր. նա արգեն չորս յերեխայի մայր եր և պատ-
րաստվում եր դրանց թիվը դարձնել հինգ: Բարձ-
րահասակ եր ու բարձրախոս. յերբ առանձնա-
նում-խոսում եյին—նրա ձայնն այնուամենայ-
նիվ գալիս-հասնում եր պառավերին... Բայց
ջահեները մենակ խոսելու համար չեյին առանձ-
նանում, այլև յերգելու: Յերգում եր գլխավո-
րապես Սրապի կինը. նա ել՝ զիլ ձայն ուներ:
Նա յերգում եր, Վարթևանի կինը՝ Մարջանը,
թեև ձայն չուներ, մասնակցում եր հաճախ, իսկ
Յեղեկի կինը՝ ձայն եր պահում միայն. խոսքեր
չեղեկի կինը՝ ձայն եր պահում միայն. Խոսքեր
ասում, այլ միալար — ը ը ը... Տարորինակ
ե թե լիչպես ամուսինների բնավորությունը
հաճախ այնքան նման է լինում իրար: Այլպես
եր և Յեղեկի կինը միշտ համեստ ու սակավա-
խոս Յեղեկի նման:

Գնացի սարը սրնձի,
վոս դիպալ մեկ ընձի...

Յերգում եր Սրապի կինը՝ Զանանը զիւ
զվարթ ձայնով, իսկ Յեղեկի կինը — ը ը ը... Ձայն
եր պահում գլխաշորն աչքերին ու ականջներին
քաշած:

Պառավ Գայանը լսում եր նրանց և նրա ա-

դոտած, կուչ յեկած աչքերը ջրակալում եյին շարունակէ չիշում եր... Շատ բան եր հիշում Քայանը: Մարդու մահը և վորդու կորուստը ջահել հասակում, հետո Բենոյի զինվոր գնալը, պատերազմի տարիների մենակությունն ու վիշտը նրան դարձրել եյին դյուրազգա, և յերգը—ուրախ թե տիուր—հուզում եր նրան հավասարապես, ու չեր կարողանում արցունքները զըսպել: Այժմ նրա միակ իղձն այն եր—Բենոյին պատկեր ու մեռներ... Բայց Բենոն պատկելու ցանկություն չուներ դեռ: Մոր բոլոր հորդորներին պատասխանում եր միւսույն խոսքերով:

— Թող, մերս թող եղ բուրջվական բաները...

Մի ուրիշ անգամ կավելացներ մտահոգ՝

— Թող հլա, մերս, թող տեսնենք ինչ արում...

Վերջերս նա այս խոսքերը շատ եր կըրկնում, վորովհետեւ ականջովը շատ բան եր դիպչում: Ասում եյին, Ահարոնն ու Սողոմը «իրնդիր են ավել տերության», վոր իրենց հողերը յետ տան: Խոսում եյին նաև, թե Սերգոն նույնապես գանգատ ե տալու՝ իր աշխատանքի հախնառնելու համար: Այդ մասին խոսում եյին թե ժամի պատի տակ և թե այն գյուղացիները, վոր մեկմեկ գալիս եյին նրանց բոստանը տես-

նելու: Մի որ ել Թաթոս ամին յեկավ: Տերուգորմյան ձեռին, հանդիսավոր, դանդաղ քայլելով անցավ առուներով, նայեց գետնախնձորներին, մարգերին ու զարմացավ.

— Պահապահն-պահն... Բողկ ել եք ցանել, կոտեմ ել... Սիմինդ ել կա, տեհեք: Սնիս, ուհան... Պահ-պահն... Կեցցեք, ախպեր... Բայց ինչ բուտաններ կային Որդուբաթ, ինչ ձմերուկ, ինչ յեմիշ... Տերդ մեռնի, Որդուբաթ... Բայց ձերն ել պակաս չի: Մագարիչ ունեք... Տեհեք, բայց պուկ ել ունեն, արևածաղիկ ել... Լավ ա, ախպեր: Բայց ասա հալալացնեն...

— Ո՞վ պիտի խանդարի վոր, — հարցրեց Բենոն:

— Յեսիմ: Ասում են խնդիր են տվել տերության...

Յեվ Թաթոս ամին պատմեց այն, ինչ ուրիշներն ել ասում եյին, թե Ահարոնն ու Սողոմինց հողը յետ առնելու համար խնդիր են, տվել, իսկ Սերգոն ուզում ե գատարան դիմի...

— Գատարկ բան ե, ասաց Բենոն անտարբեր, բայց մտածմունքի մեջ ընկավ:

Յերբ քաղհանը վերջացավ, աղերքը գետից հանած առվով մարգերը ջրեցին, վորպեսզի պառակ Գայանի ասած՝ «յարալու կանանչը լավա-

նա»։ Սրապը, վարտիկը մինչև ծնկները քշտած, գնում եր ջրի առջեկից և անցքերը բանում մարդկերի վրա, թենո՞ն ու Յեղեկը ջուրն անում եյին մարդերը, իսկ Վարթևանը քաղհանը (վոր կանայք կիտել եյին մարդերի թմբերին ու առուներում) տանում-թափում եր բոստանից դուրս, այնտեղ, ուր հողից ջոկած քարերը թափված եյին կիտուկներով... Ծարավ հողն ազահորեն ծըծում եր ջուրն անթիվ բերաններով, պատճում տեղ-տեղ և բշտիկներ գոյացնում ջրի մակերեւվույթին։ «Ուրբաթախոս» Յեղեկը, ծնուաը բահի կոթին դրած, լուս հետեւում եր մարդը վագող ջրին, և նրա դեմքը փայլում եր։ Միրում եր նա մարդեր ու արտեր ջրել. յերբ ջուրն առաջին գլուում եր առվով—նրան թվում եր, թե կանաչը զվարթանում ե և որհնում իրեն։ Մանկությունից մնավատ զգացմունքներ ուներ՝ կարծում եր՝ գիշերը ծաղիկներն ու բյուսերը խոսում են իրար հետ... Յերբ մարդերը պոնկեւպունկ լցվում եյին ջրով նրա մութ դեմքը պայծառանում եր, փափախը յետ եր դնում, ճակատը բանում, և այդ ժամանակ նրա աչքերն ստանում եյին գոհունակ արտահայտություն։ Առհասարակ բույսերի և անսառւնների շրջանում նա իրեն զգում եր հարազատ միջավայրում։ Վոչ միայն խնամքով եր վարփում հետ-

ները, այլև խոսում եր, մանավանդ յեզների հետ։ «Դե, դե, յետ դառ», — ասում եր նա մարդերին մոտեցող յեզան. և յերբ յեզը, այդ խոսքերին ուշ չդարձնելով, շարունակում եր մոտենալ ինքն առաջ եր գնում. «Ի՞նչ անհասկացողն ես, տու Քեզ ասում են՝ յետ դառ ելի»...

Առաջին որը տղերքը մինչև մութն ընկնելը ջրեցին մարդերի մեծ մասը և, բահերն ուսած, գնացին տուն, մնացածը թողնելով վաղվան։ Բայց վաղը նրանց սպասում եր անսպասելի բան...

Առավոտներն ամենից առաջ բենոն եր գալիս բանջարանոց, վորովհետեւ տունը մոտ եր. կուցե և նրա համար, վոր ազատ եր կնոջ ու յերեխայի հոգսից։ Մի հին պինջակ ուսերին՝ գալիս կանգնում եր նա բանջարանոցի ծայրին զալիս կանգնում եր հետո առաջացած ցանքսին, հետեւ լսդհանուք մի հայացք գցում ցանքսին, հետեւ մարդերի արանքով՝ առուներով գնում եր առ մարդերի պահանջով։ Առուներով գնում այս կամ այս ու այն կողմ, յերբեմն կուանում այս կամ այն մարդի վրա—տեսնելու՝ ինչպես են աճում։ Ապա գնում եր գեղի ցորենի ու գարու արտեւում վարձրացեր, վոր բարձրանում եյին հետզհետեւ և արդեն, ըստ վարդարանում առաջաւագիր են ասում։ «ազուավաթաղ» ինչպես գյուղացիք են ասում։ Վարդարանում եյին այնքան եյին բարձրացեր, եյին յեղել. այսինքն՝ այնքան եյին բարձրացեր, վոր ապռավը կարող եր միջին թաղվել... Յորեւ վոր ապռավը կարող եր միջին թաղվել... Յորեւ վոր ապռավը կարող եր միջին թաղվել...

տում բանջարանոցի ծայրում, մի քարի կիտու-
կի վրա և տարգում հաշիվսերով, թե արդյոք
ծախով պիտի հանեն, կարող ե արդյոք ինքը
պարզերես դուրս գալ ընկերների առաջ, թե
պիտի խայտառակվի... Ու յերբ տեսնում եր կա-
նաչը զվարթացած նրան թվում եր, թե ամեն
ինչ լավ կլինի... Բայց յեթե հանկարծ կարկուտ
գա կամ գետը հեղեղի ամեն ինչ - ընկերները
միենույն ե, իրեն են համարելու պատասխա-
նատու... Ամեն որ այս մտքերը զարթնում եյին
նրա գլխում, և գուցե այդ եր պատճառը, վոր
շուտ-շուտ կրկնում եր.

— Պատասխանառութ 100% ուժ:

Այդ առավոտ ել՝ ԲԵՆՈՆ բոլորից շուտ յե-
կավ-կանգնեց սովորական տեղը՝ բանջարանոցի
ծայրին, ու նայեց հեռվում փոփած առավոտյան
հովից ցնծող արտերին, բայց յերբ հայացքն իջե-
ցրեց մարդերի վրա—նրա դեմքի գոհունակ
փայլը սառավ հանկարծ, և նա զգաց, վոր բե-
րանը չորանում եւ Զեռները թուլացած՝ անկեն-
դան կախ ընկան ուսերից:

Ի՞նչ եր պատահել:

Ճանապարհի մոտի մարդերով ծայրեածայր
տափար եր անցել ու տրորել հենց սոր քաղճա-
նած մարդերը, վոր այսոր պիտի ջրեյին Սկզբում
Բենոյին թվաց թե միայն յերկու մարդ ե այդ-

պես տրորված, բայց յերբ ուշադիր նայեց — արձա-
նացավ։ Ճանապարհի կողմի մարզերը արորված
ելին ծայրեւծայր... Նրա աչքերում հուսահա-
տության հետ միասին փալեց և կատաղություն,
բայց շրթերը սեղմելով՝ դապեց իրեն և անխոս-
նստեց քարի կիտուկներից մեկի վրա։ Նրա գեմ-
քը մռայլվեց, մթագնեց և յերեսի մի կողմը՝
բերանի անկյունից մինչև աչքի տակը սկսեց
խաղալ, ցնցվել։ Նրա մաքովն անմիջապես ան-
ցավ Սերգոն։ «Վայ, Սերգո, վայ»... Բայց փոքր անց-
մտածեց, վոր Սերգոն այդպիսի բան չեր կարող
անել, ավելի շուտ անտեր տավար ե յեղեւ
ճանապարհեց շեղվելով, մտել ե մարզերը... Բայց
ճանապարհեց շեղվելով, մտել մարդ չի յեղեւ...

միթե այդ տակարը՝ «Միտեսնելի—ցույց կտայի տավարածին», ասագ նա մտքում:

Քիչ հետո, միմյանց յետելից, յեկաս աղբւ
քը՝ Սրապը, Յեղեկը, Վարթեանը, Նըանք ել
հավանական համարեցին այն, վոր ճանապարհից
անզնող տափար ե ընկել:

— Վոր ասում ի «մատաղ արնեք»
ջան, եսորվա համար ի ասում, — նկատեց պառավ
Գայանը, ու զայրացած՝ ձեռները բարձրացրեց
վեր: Անողըն, ոխալ պորտով կուր մնա...

Դե լավ, մի իս, լավ, թող որ է շատ կատար խռոքերը, — ասաց Բենոն ու բահը ձեսին գնաց դեպի մարզերը:

Յեկ այդ որը, փոխանակ մասցածը ջրելու, սկսեցին տավարի տրորած մարգերը կարգի բերել: Զեռով հողը լցրին վոտնատեղերը, հավասարեցրին: Յեկ վորովհետեւ տրորած տեղերի կանանչը փչացել եր—սերմեր բերին ու նորից ցանեցին:

Դրանից հետո՝ չանցավ մի շաբաթ, մի նոր բան պատահեց: Մի առավոտ գնացին տեսան—գետի ջուրը թափվել և բանջարանոցը և մարգերը հեղեղել... Նախընթաց որը տղերքը մարգերը ջրել եյին և առվի «բանդը» փակել: Բայց գիշերը ջուրն յեկել եր սովորականից ավելի. առուն լցվել եր մինչև պոռւնկները և նույնիսկ յեզրերից թափվել կողքի բաց տեղերն ու լճակներ կազմել: Իսկ մարգերի մի մասը ծածկվել եր ջով... Հողն այնքան եռ կշացել, վոր այլև չեր ծծում: Ճուրը կանգնել եր, և այժմ կնձռոտում եր առավոտյան հովից...

Ըստ յերեսույթին՝ ջուրն յեկել եր ամբողջ գիշեր...

Տղերքն սկզբում կարծում եյին, թե մի գուցե իրենք են մեղավոր. «բանդը», յերեի, լավ չեն կապել, բայց յերբ Սրապն ու Բենոն գնացին բանդը—նկատեցին ուրիշ բան: Բանդի բերանը փակող ձմբերը; Փոխանակ մի կողմը գցելու, ինչպես իրենք եյին անում ջրելիս, շար-

ված յեխն առվի յեզրերին... Այլևս կասկած չկար, վոր արվածը թշնամու գործ ե. այլապես ով պիտի գար փակած առվի բերանը բանար: Յեկ զարմանալին այն եր, վոր այդ ձմբերը փոխանակ մի կողմը դնելու—դիտմամբ շարել ելին յեզրերին, վոր առվով ավելի շատ ջուր դնաւ:

— Լավ, Սերգո տղա, վոնց թե քու ասածն արիր,— տնքաց Սրապը:

Իսկ Բենոն, վոր անխոս նայում եր բանդին, գլուխը շարժեց ու ասաց խորհրդավոր:

— Պըտի մի բան անել...
Թե ինչ պիտի աներ—այդ մասին ել վոչ մի խոսք չասաց:

Մյուս որը, սակայն, յերբ Յեղեկ գնաց բանջարանոց՝ նկատեց վոր Բենոն գետափի ուռիսերից մեկը բարձրացած—ձղները կաըրտում ե ուրագով և թափում ցած: Ձղներից մի քանիսը կիսով չափ ընկել եյին ջրի մեջ և մնացել զլիսիվայր անկված: Իսկ մի բանի ուռիսի քշտված եյին արդեն:

Այդ բանը Յեղիկին շատ տարորինակ թվաց, այնքան տարորինակ, վոր ստիպված յեղակ մի ամբողջ նախադասություն ասել:

— Եղ ի՞նչ ես անում, Բենո...
Բենոն լուռ, կենտրոնացած կտրում եր ձըղները:

— Քեզ եմ ասում ե, — շարունակեց խոսել Յեղեկը:

— Հավաքի, — ասաց Բենոն, և շարունակեց կտրտել:

Յեղեկի մեղքը գալիս եր: Կանանչ ծառը կտրելը լավ չի. մեղք ե, — մտածում եր սա և ջրին ընկած ճղները քաշելով՝ հանում ափը: Իսկ Բենոն մի առ ժամանակ իրար յետկից, կտրտեց ճյուղերը, թափեց ցած ու իջափ: Յերկուսով ճղները կրեցին բանջարանոցի մոտ: Յետո Բենոն սկսեց դրանք քշտել ու տնկել հողում:

Այդ ժամանակ միայն Յեղեկը հասկացավ, վոր բալագան ե շինում: Յերբ ճղները բոլոր տնկեց, նրանց ծայրերը միացըց իրար — թելերով կապեց, ապա սկսեց դրանց արանքը գործել՝ կթողի նման: Յերբ այդ ել վերջացըց, մեջը ջմբերից անկողնի տեղ շինեց՝ հողից կես արշին բարձր, ինչպես անում են ճամբար դնացող զինվորներն իրենց վրաներում: Նույնպիսի ճմբերով շրջապատեց վրանի բոլորքը, վոր անձրևաջուր չթափվի ներս:

Յեզ վորովհետեւ վրանի ներսը, մանավանդ ճմբերից շինած անկողնատեղը խոնավ եր առայժմ, Բենոն մի քանի որ քնեց դուրսը, մինչև բալագանը չորանա: Բարեխախտաբար անձրեւ չըկար: Հաճելի եր քնել բացոթյա և նայել յերկո-

քին, ուր աստղերն ճրագ-ճրագում եյին, թարթում և, կարծես, ինչ վոր հանդիսավոր տոն կատարում յերկնքում... Գյուղը քնում եր վերև, խաղաղվում եր ամեն ինչ, գետն եր միայն, վոր չեղ լուսմ և խշշում եր անվերջ, ու թվում եր նրա ձայնը՝ գալիս ե հավիտենությունից, աշխարհի սկզբից, ու թվում եր պիտի խշա հավիտենաբար, հավիտենաբար... Բենոն ականջը գետի ձայնին, ձեռը գլխի տակ, մտածում եր ու ինչ-վոր հաշվեր անում մաքում: Յեզ նրա մտքերը գնում եյին շատ հեռուն... Հիշում եր ելի լազարեթի մոտի կոմունը՝ իր բոլոր մեքենաներով ու հարմարություններով, յերևակայում եր սպիտակ տներ՝ իրենց բանջարանոցի կողքին, սպիտակ տներ՝ բարձր, թիթեղած տանիքներով, մեծ, պայծառ լուսամուտներով... Բայց մեկ ել յերբ նայում եր բալագանին այդ բոլորն այնքան հեռու յեր թվում, վոր ամեն ինչ դառնում եր անհավանական ու անկարելի...

Առաջին իսկ որը, յերբ Բենոն վորոշեց քընել բանջարանոցի մոտ, վարթեանն ասաց Սըրապին:

— Ես չեղափ: Նա եստեղ քնի, մենք տանը — հարմար չի...

Յեզ այնուհետեւ բոլորն ել՝ Յեղեկը, Սըրապը, Վարթեանը մնում եյին նրա մոտ մինչև ուշ

յերեկո։ Նստում եյին բալազանի առաջ ու զբուցում Յերբեմն, լավ յերեկոներին, կանայք եւ քաղհանից հետո, նստում եյին նրանց մոտ և նույն պիս մասնակցում գրուցին, ավելի շուտ ականջ պիս մասնակցում մարդիկ... թեղնում, թե ինչ են ասում մարդիկ... թե նոն պատմում եր տեսած բաներից կամ իր ծրագիրներն եր պարզում. — Գործը լավ գնա—կողին կառնեն, հավեր կը պահեն, խոզ... Վարթեփեր կառնեն, հիշում եր կառապանության որերը և վանը հիշում պատմություններ անում, վոր մարդու մարմին փշաքաղվում եր։ Մի անգամ, որինակ պատմեց, թե ինչովես գիշերը գոմում քնած ժամանակ, խոզը սոտեցել եր ու ականջը բռնել։

— Յերեք չորս որ վախից ուշը դլուխս չեր գալիք, — ասում եր նա։

Խոսում եյին և թիթեղե ամանով թեյ յեփում կրակի վրա։ Յերկու հաշա փայտ տնկել եյին իր արից հետու, դրանց վրա մեկն ել մի յերկաթե ձող, ամանը կախում եյին այդ ձողից ու թեյ յեփում... Չոր ուռերը ճարձատունով վառվում եյին բռնկված, լուսավորում շուրջը նստողների գեմքերը պրոժեկտորային լույսով, իսկ նրանց յետև խափարը տատանվում եր, դողդողում ու թանձրանում հեռվում...»

Թվում եր թափառող գնչուների մի ընտանիք ե կանդ առել դետափին և ընթրիք

պատրաստում խարույկի վրա։ Կրակի լույսին դալիս եյին գիշերային թիթեռներ, մժեղներ, ճահիճից՝ մոծակներ։ Պտավում, բզզում եյին խմբերով, պար կապած, և թիթեռները հաճախ ընկնում եյին բոցերի մեջ ու այրվում։

— Ի՞, խալերա, — ասում եր Վարթեռնան անհանգիստ։ — Ասա ձեզ ովա ասում կրակի մեջ ընկնեք...»

Ու ձեռով քշում եր մյուսներին։

Թվումներից լսվում եյին յերբեմն թոշունների վախեցած ձիչ, մնչոց, իոկ ներքեւ՝ ճահիճում գորտերը կոկուում եյին շարունակ։ Թվում եր՝ նրանք ել հետաքրքրվում են զրոյցով և ուզում են մասնակցել։

— Կոակ... կրոռակ... կռռռակ...

Մի այգափսի յերեկո, յերք կրակի շուրջը հավաքված զրուցում եյին, հանկարծ ատրճանակի կրակոց լսվեց...

Կանայք վախեցած ձիչ արձակեցին, իսկ Սրապը տեղից վեր թուավ ու վազեց գեպի թը փուտները։ Երան թվաց թե կրակոցն այնտեղից եր, Բայց քիչ հետո վերադաշվ և հայտնեց, վոր մարդ չի յերեռում։

— Ե, գեղամիջումը կըլեր, քեզ եղպես թվաց, — ասավ Վարթեռնը։ — Դատարկ բան ա:

Դատարկը — գատարկ, բայց մենք պետք ե թվանք ունենանք, — ասաց Բենոն։

VII

Մայիսն անցավ անձրեներով, մասամբ մասսաւով, վոր հաջորդում կամ նախորդում եր անձրեներին։ Անձրել գալիս եր յերեմն առավոտից մինչև յերեկո կամ որ ու գիշեր... Յերբեմն ել մառախուղը, ալեկոծվող ամպի նման յեռալով, սողոմ եր բլուրներով ու իջնում մինչև գաշտը, մինչև գյուղ և քողի պես ծածկում նրան։ Գորշ մշուշի մեջ յերեսում ելին միայն յեկեղեցու սև գմբեթը և տերտերի ու Սհարոնի բարձր տների թիֆեղած տանիքները, վոր իշխում ելին խրճիթների ընդհանուր գորշության վրա... Բենոյի բալագանը մեն-մենակ, թրջված հավի նման, կուչ եր յեկել գյուղի ներքե, բանջարանոցի մի անկյունում և մոռացվածի տպափորություն եր անում, չնայած տղերքը մեկ-մեկ կրակ ելին վառում նրա մեջ. ծուխը յենում եր տատանվելով ու խկույն ցրիվ գալիս, չհամարձակվելով ուղիղ վեր բարձրանալ։ Ամպերը ճընշում ելին.

Բենոյի տրամադրությունը վատ եր։ Տղերը շարունակ գալիս դժգոհում ելին ելի, թե ինչո՞ւ այսքան աշխատանք թափեցին, վորի վերջը, ով գիտի, ինչ պիտի լինի—անձրե, կարկուտա... Խոսում ելին դարձյալ այն մասին, վոր Ահարոնն ու Սողոմը, բացի այն, վոր գանգաս են տվել, այժմ ել ուղում են գնալ Յերեսու

«ատվակատ բռնեն», վոր իրենց հողերը յետ ստանան և այս տարվա վասար իրենցից՝ «կոմունի» տղերքից առնեն... Այդպես ելին խոսում ծամի պատի տակ, և այդ խոսք ու զրույցը գալիս-համանում եր տղերանց ու մտահոգում նըրանց։ Իսկ Սերգոն հո՛ ամեն անգամ Վարթեանին, Սրապին կամ Յեղեկին հանդիպելիս (Բենոյի հետ խոռվ եր) պահանջում եր եր աշխատանքի վարձը. «Քսան որ աշխատել եմ, հախարվեք. թե չե վայ ձեզ»,—սպառնում եր նա ատամները կցած և ձեռը բռունցք շինած։ Յեկ տղերքն այս բոլորը գալիս-հայտնում ելին Բենոյին, իսկ Բենոն—կարծես վոչինչ—ծխամուրճն ատամների արանքը դրած՝ լուռ լսում եր նրանց և ասում հանդարտ։

— Վոչինչ ել չի ըլի... Պատասխանատուր եմ հարյուր տոկոսով։

— Ե՛, ասում ես ելի, — կասկածում ելին տղերքը՝ գլուխներն որորելով։

Յեկ այդ կասկածը տիրեցնում եր Բենոյին։ Դրա վրա ավելանում եր և վատ յեղանակը։

Հունիսը բացվելուն պես, յեղանակն լավացավ, և բույսերը՝ ցորենը, կանաչները, Վարդաձորի ամբողջ ցանքսերը միանգամից թափ ավին երենց։ Թվում եր՝ վաղուց սպասում ելին արեվին, և հենց յերեաց թե չե—ժպտացին ուրախու-

թյունից ու ձգվեցին, գլուխներն ու տերեները պարզելով դեպի վեր: Ու խոնավ դաշտերից գուլուշին, ինչպես այրվող աթարի ծուխ, հորդ բարձրանում ու չքանում եր ողում: Գոլորշի յեր բարձրանում ե բալագանի թաղիքից, ինչպես թրջված ու չոքած մի ուղտից: Յեվ վորովհետեւ թաղերը շատ եր թրջված, տղերքն ինչպես անձրեկի ժամանակ, այնպես ել հիմա, ներսը կրակ եյին վառում, վոր շուտ չորանա:

Արեից բանջարանոցի բույսերն ևս բարձրացան արագ: Ամենից առաջ իր մարզը կանաչով լցրեց կոտեմը, հետո մարզերի թմբերին, նոր տերեներ արձակելով, թե-թեկի տվին ամսական ու տարեկան բողկերը, մարզերին տալով յեզերք ները նախշով զարդարուն կանաչ թաշկինակ՝ ների տեսք: Իսկ տակավին չբացված արեածաղիկներն իրենց, իրար պարզած լայն տերեներով, թվում եր հեռվից՝ շուրջպար են բոնեմարզերի վերև. նրանք աճում եյին վոչ թե որերով, այլ կարծես ժամերով այնպես արագ ելի՛ բարձրանում: Սիմինդն իրար յետեկից արձակու եր իր դեղին թրերը և վայրի յեղեգնի տեսքնում, իսկ գետնախնձորը հետզետե մեծացնում եր իր գանգուր վնշերը... Մի խոսքով կանաչն այժմ աճել և աչը եր շոյում: Տղերքն աայում եյին բանջարանոցին և զարմանում, թ

ինչ շուտ աճեց ամեն ինչ: Նրանց տրամադրությունն սկսեց կամաց-կամաց լավանալ, բայց մաց ելի այն մտահոգությունը, թե ինչ պիտի անեն այդչափ կանաչին:

— Բողկն արգեն ուտելու վախտն ա, — ասաց Սրապը մի որ, ամսական մի քանի բողկը ձեռին բալագանը մտնելով:

Իսկապես,—բողկի գլուխն արդեն աղավու ձուի չափ եր, մնում եր կապուկ անել ու ծախեր:

— Հըմի եսքանը, դրուստ, վորտեղ պտի սաղացնենք: Մենք նո կարալ չենք ուտի, ասում ե Սրապը մեղմ, աշխատելով իր անհանգատությունը չհայանել միանգամից:

— Ուտել... Ո՞վ ասավ, վոր դու ուտես, — ասում ե բենոն քմծիծաղ, ու ծխամորճը ծծում հանդարտ:

Ծխում ե ու մտածում, աչքերը կկոցելով:

Այդ հանգստությունը վրդովում ե Սրապին: Ինչ անտարբերություն ե: Ինքը խոսք ե ասում, իսկ նա բանի տեղ չի դնում իր ասածը: Ու Սրապը տաքանում ե քիչ և խոսքի մեջ դժոնության շեշտ դնում:

— Հը, ինչ եք անելու ախար...

Բենոն ելի հանգիստ ե:

— Տեսնենք, — ասում ե մտախոհ, առանց չերուխը բերանից հանելու:

— Ելինչ տեսնենք, այ մարդ: Կնանոց մեջը
կոտրեց քաղհան անելով: Հիմմի...

Բենոն լուռմ և և մտածկոտ նայում դեպի
հեռուն:

Սրապը տաքանում ե, զլուխն որորում, իսկ կարմրել եր սարերի այն կողմը. թվում եր հրո-

բենոն ելի—կարծես վոչինչ—նայում ե հեռունքին կար, վորի բոցերից հորիզոնը բռնկել եր
սեց Բենոն. — մտածում եր ինչ-վոր: Իսկ մյուսկարգած, սպասում ելին արևին, մանավանդ
առավոտը վաղ յելակ տեղից, յերեսը, ինչպես լավաթաթախ լայն տերեներով արևածաղիկներն
միշտ, լվաց գետում և, իր հետ բալագանուրենց վակ զլուխները, ինչպես կույր մանուկներ,
պառկող Սրապին զարթեցնելով՝ ասաց:

— Յես գնում եմ, Սրապ:

Սրապը քնած տեղը հորանջեց և, աչքերը բախես խենթ սիրահար կամ մորը հետեւող յերեսա.
նալով, զարմացած նայեց Բենոյին, վոր ու ծխառոր ժամանակ նայում ե արևին, իսկ ծաղկած
մորճն ատամների արանքում, պատրաստվում երամանակ հո՛ հրձվանքից ժպտում՝ շարունակ...
վառել այն ու ճանապարհ ընկնել:

— Ու՞ր, — հարցրեց Սրապը:

— Քաղաք... Կանաչի համար:

— Գնա, — ասաց Սրապը՝ ու նստեց տեսչ մի բույս այնքան տիսուր չի լինում, վոր-
դում: — Թեզ կդաս:

— Տեսնենք...

Ու Բենոն, ծխամորճը բերանի մի անկյուն՝
նը դրած, արագ քայլերով զնաց բանջարանոցի
յեղերքով ու ընկապ ճանապարհը: Մի առ ժամանակ, մի բան զլուխքե-

Խաղաղ առավոտը խոստանում եր պայծառ
որ: Սրել դեռ դուրս չեր յեկել, բայց արեւելքը

բենոն ելի—կարծես վոչինչ—նայում ե հեռունքին կար, վորի բոցերից հորիզոնը բռնկել եր

սեց Բենոն. — մտածում եր ինչ-վոր: Իսկ մյուսկարգած, սպասում ելին արևին, մանավանդ

առավոտը վաղ յելակ տեղից, յերեսը, ինչպես լավաթաթախ լայն տերեներով արևածաղիկներն

միշտ, լվաց գետում և, իր հետ բալագանուրենց վակ զլուխները, ինչպես կույր մանուկներ,
պառկող Սրապին զարթեցնելով՝ ասաց:

— Յես գնում եմ, Սրապ:

Սրապը զնած տեղը հորանջեց Բենոյին, մտա-

շով տեսնես կարող ե Բենոն մի բան զլուխքե-

նը յերես, անշարժանում և թափիծով ու կարո-

ւ սպասում մյուս առավոտին: Գիշերները

մի բույս այնքան տիսուր չի լինում, վոր-
դում: — Թեզ կդաս:

Սրապն աշքով ուղեկցեց Բենոյին, մտա-

շով տեսնես կարող ե Բենոն մի բան զլուխքե-

նը յերես, կամ տակ կլինենք կամ գլ-

ու ծոծրակը գորելով վեր կացավ նա տեղից:
Գնաց Բենոն և ճաշ անցավ—չեկավ: Վերա-

դավ միայն յերեկոյան դեմ՝ մի հասարակ
ձեռնափայտ շինած, ելի ծխամորճն ատամ-
ի արանքում:

Տղերքը բալազանի առաջ նստած զրուցու
ելին:

— Հօր. տղա ես, աղջիկ, հարցըց վար
թևանը դեռ հեռվից:

Բենոն հոգնած նստեց, վոտները մեկնել
կանչների վրա:

Նա տիսուր ու մտած կոտ եր յերևում:

Այդ նկատելով Վարթևանն անհանդստաց
— Հօր, բանման յեղավ:

— Հաւ տեսնենք, — հոնքերը վեր քաշել
ակամա պատասխանեց Բենոն:

Տղերքը տարակուսած նայեցին իրար: Վարթևանի աշխույժն ընկավ իսկույն: Յեղեկը գլխին որորեց լուռ, իսկ Սրապի տչքերը պապ
ցին ներքին անհանդստությունից

— Լավ, ուրեմն զուր տեղը ցանեցինք եղ
տերը, — չամբերեց նա:

— Ինչու զուր, — զլուխը բարձրացըց
նոն:

— Բա ինչ: Վոր չի ծախվելու — ինչին
պետք — տաքացավ Սրապը: — Սրեգոն ասում
բանի տեղ չելինք դնում, — ավելացըց նեղա
ու յերեսը շրջեց մի կողմի վրա:

Խոսակցությանը միջամտեց և Վարթև
նա, վոր միշտ պաշտպանում եր Բենոյին
տեսակ կասկածանքների դեմ, այս անդամ

իւն որորեց տիսուր և այն կարծիքն հայտնեց,
թե քանի վոր այդպես եր լինելու. — ավելի լավ
չեր հենց այդ կամաչեղենի տեղն ել ցորեն, գա-
լի կամ գետնախնձոր ցանելին:

— Իհարկե, — տնքաց Յեղեկը:

Գլուխները կախ լոեցին մի առ ժամանակ.
ապա նորից սկսեցին խոսել, ափսոսացին նողը,
երենց աշխատանքը, վոր զուր պիտի կորչի:
Հիշեցին նորից Սրեգոյին, նրա խոսքերը և այն,
թե ինչ կասեն հիմա զյուղացիք: Յեկ նրանց
ավելի ծանը եր թվում գյուղացիների հեղնանքը
և Սրեգոյի ծաղը, վոր ամեն հանդիպելիս յերես-
ներովը պիտի տար — «տեսաք — ինձ չլսեցիք»...

— Խայտառակություն ա մի խոսքով, — յեղ-
րափակեց Սրապը:

Բենոն լուս եր ինչ-վոր մտքերի յետեկից
ընկած: Քաղաքում նա յեղել եր մի շարք խա-
նութպանների մոտ, առաջարկել եր նրանց՝ վեր-
ցնել-ծախել կանաչին: Մեծ մասամբ չելին ու-
զել, միքանիսն ել թե՝ «Եղքան հարկավոր չի,
մինք որական մի քանի կապուկ հաղիկ ծա-
խենք»... Բենոն մտածում եր, վոր այդ միքանի
կապուկն ոգուտ չեր տա իրենց. ով պիտի ժա-
մանակ կորցներ՝ այդ միքանի կապուկը գյուղից
քաղաք բերեր... նա գնացել եր նաև զյուղատնտեսի
տուն՝ նրա հետ խորհրդակցելու. — տանը չեր յե-

զել։ Այժմ նրա միակ հույսը — գյուղատնտեսն եր, թէ ինչ խորհուրդ կտա։ Զե՞ վոր նա ինքն ել հավանություն եր տվել կանաչի ցանելու մտքին։

Յերբ տղերքը շատ խոսեցին, դժգոհեցին հիսութափած, նա ասաց միայն.

— Սպասեցեք հլա, տեսնենք գյուղատնտեսը ինչ ա ասում.

— Ե՛, դու ել քու գյուղատնտեսով սպանեցիր մեզ, — ասաց Սրապը, ու դարձյալ յերեսը շրջեց նեղացած։ — Ելեմենտի մինն ել քու գյուղատնտեսն ա։

Այդ որը խոսակցությունը վերջացավ զիա՞նով, և տղերքը ցըվեցին տխուր։

Գիշերը Բենոյի քունը չտարավ, առավոտ մութ-լուսին յելավ տեղից և, առանց մեկին մի բան ասելու, նորից ճանապարհ ընկավ դեմի քաղաք։ Բայց գեռ ճաշ չեղած, յերբ տղերքը շապկանց գետնախնձորի բուկն ելին լցնում, նոյն յելավ և հայտարարեց։

— Տղերք, մենք պետք ա մի ձի առնենք ու մի կաչկա։

Տղերքն այդ հայտարարությունն ընդունեցին լուսթյամբ ու զարմանքով։

* Կաչկա — տաշկա — յերկանիվ սայլակ։

— Եղ ինչու համար ա, — առաջինը խոսեց Սրապը, վիճելու պատրաստ։

Նրան միշտ անհանդստացնում եր նոր բան առնելու միաբը, մի խոսքով՝ նոր ծախսերի խնդիրը — հանկարծ պարտքերի մեջ ընկնեն ու չկարենան տակից դուրս գալ։

— Ինչի՞ համար, — կրկնեց Բենոն Սրապի հարցը։ — Պետք ա... կանաչին քաղաք տանելու... Լոռություն։

Այ թէ ինչ։

— Ուրեմն կանաչին վերցնո՞ւմ են։

— Ուրեմն առնող գտնվել ե...

Տղերքը գործերը թողին՝ բահերը իրեցին հողի մեջ ու մոտեցան։

— Մի կարգին պատմի՝ բան հասկանանք, այ տղա, — ասաց Վարթեանը, ուրախությունից յերկար միքուքը արորելով։

Այս, Բենոն կանաչի առնող ե գտել։ Նա պայմանավորվել է կոոպերատիվի հետ, վոր կանաչեղենը նրանց տա մեծ մասաբով։ Այդ բանում նրան ոգնեց ելի գյուղատնտես ընկեր Սարդարյանը։

— Յեկավ մարդը կոոպերատիվ և խոսեց ինչպես կարգն ա, — ասաց Բենոն։ — Թե՛ եսպեսենպես — ընկերներով կանաչի յեն ցանել, ու դում են բերել եստեղ ծախել։ լավ կանեք

վերցնեք... «Ի՞նչ կանաչի յե», հարցնում են: «Կոտեմ, ասում եմ,—բոխկը, սոխ»... Տվի անունները: «Յեթե ամեն որ բերես՝ կանենք, ասում են:—Յեթե միայն լավ կանաչի յե»:

— Սրանից ել լավ կանաչի, ասում ե Սրապը ձեռը դեպի կանաչները մեկնելով: Սրանից լավը պիտի գտնեն... Բայց ինչու մենք պիտի տանենք,—հարցնում ենա քիչ լոելուց հետո, տարակուսած:

— Իրանք չեն կարող,—ասում ե Բենոն,— գործ շատ ունեն:

— Իսկ յերբվանից են ուզում,—հարցնում ե Վարթևանը:

— Այ, ես յերկու որը նրանց մարդը կրդա, կանաչն տեսնելու. հավանեց, պայման կըկապենք:

Ուրեմն նոր պիտի պայման կապէն...

Ու իրար են նայում ընկերները հիասթափված:

— Այս, դեռ պիտի դան մտիկ անեն,—ծոր ե տալիս Սրապը:

— Բա վոր չհավանեցին,—խոսում ե Յեղեկը վերջապես:

Յեթե Յեղեկը խոսեց—դա նշան ե արդեն, վոր շատ անհանգիստ ե:

— Կհավանեն,—հույս ե տալիս Բենոն:

— Տեսնեք,—ասում ե Սրապը կասկածով:—Տեսնեք: Կամ տակ կըլենք կամ գլուխ...

Մյուս որը, իսկապես, կեսօրից հետո, յերբ տղերքն առուն կարգի եյին բերում, քաղաքից մի կառք յեկալ՝ կանգնեց բանջարանոցի մոտ: Միջից գուրս յեկավ մի բարձրահասակ, սպիտակ ոձիքով, փողկապով տղամարդ՝ ձեռին պորտՔել: Բեզն ու միրուքն ածիլած, զմիկն կեպի, փուներին կաշվե պատիչներ: Բենոն գնաց ընդառաջ: Քաղաքացին ձեռքը թափ տալով, իբրև հին ծանոթի բարեկց նրան, իսկ մյուսներին զլիով արավ ու սկսեց ուշադիր նայել բոստանին: Բենոյի հետ անցավ առուներով ու, աչքերը կուչ ածելով, մեկմեկ նայեց մարդերին...

— Վոչինչ, —ասավ,—լավ բոստան ունեք: Ամսական բողկը շատ քիչ ե, բայց կարող եք ելի ցանել. մեկը չհասած, մյուսը կըհամնի:— Ելի ցանել. մեկը չհասած, մյուսը կըհամնի:— Հավանեց և կաղամբը.—մենք բոլորը կիերցնենք, —ասաց:— Աշխատեցեք միայն լավ գլուխնենք, —ասաց:— Աշխատեցեք միայն լավ գլուխնենք, տակին—բոլորը կիերցնենք...

Ապա մի ամսական բողկ հանեց ու, տերենով սրբելով, կերպվ:

— Յեկեք ուրեմն պայման կապենք ու գործի անցնենք, —ասաց նա բողկը ուտելով, պորտՔեյլը թեյի տակ սեղմած, բանջարանոցից դուրս

գալով:—Յեկեք եգուց կամ մյուս որը: Յերբ
ձեզ հարմար կըլինի...

Նա մտածեց մի փոքր և ավելացրեց.

— Յեթե դործ չունեք, գնանք հենց հիմա:
Մի բան վոր կառքում տեղ կա: Հարմար ե:
Իհարկե: Բենոն պատրաստ ե հենց հիմա:

Յեկ նստեց Բենոն քաղաքից յեկած մարդու
կողքին, ու գնաց: Կառքի անիմսերն ուետինի շի-
ներ ունեյին: Զիերից մեկն սպիտակ եր, մյուսը
կարմիր:

— Տեսար,—զլուխն որորեց Վարթեանը
կառքի յետեկց:—Վո՞ս խալերա...

VIII

Բենոն այդ որը չկերագարձավ. նա յեկավ
մյուս որը յերեկոյան և տղերքին ցույց տվեց
մի կնքած թուղթ: Պայմանագրի պատճենն եր:
Դրա համաձայն նրանք ամեն որ կանաչի պիտի
տային կոպերատիվին և ամսեամիս հաշիվ տես-
նեյին: Պայմանագրում ասված եր և այն, վոր
կոմունի տղերքը՝ Բենոն ու ընկերները կարող
են միշտ «իհաշիվ» ապրանք վերցնել կոոպերա-
տիվից:

— Լավ, պալոծիմ եղպես,—ասաց Վարթե-
անը:—Իւսո մեզ չեն խարի...

Ինչպես ընկերներին, այնպես ել նրան,
առետրական այդ գործարքը թվում եր բարդ

մի բան: Կոռպերատիվ, վարկ, իհաշիվ... Ինչ-վոր
անծանոթ, խճճված, մութ, խառն բաներ եր այդ
բոլորը, վորից զլուխ հանելը դժվար եր շատ:

— Ինչու պիտի խարեն, —ասաց Բենոն:

— Յեսիմ. շատ կստանան —քիչ կգրեն. բան
կառնենք —սխալ կըհաշվեն: Առուտուրական մար-
դիկ են, ով ե իմանում: Մենք ել վոչ հաշիվ
դիտենք, վոչ չոտի գցել:

— Կոռպերատիվը բուրջվական բան չի, վոր
խարեն, —նկատեց Բենոն:

— Յեսիմ, —շարունակեց Վարթեանը:— Կը-
րախմալով տղա եր. աչքիս մի տեսակ յերեաց:
Ասենք, յեթե՝ խարի՝ ամոթ կրախմալին...

— Եդ հեշ, —ձեռը թափ տվեց Բենոն:—
Դուք են ասեք, թե վորտեղից ձի առնենք... ու
մի կաչկա:

— Յես մի հին կաչկա ունեմ, —ասաց Վար-
թեանը, —կը սարքեմ: Մեր հարսը կողքի տախ-
տակները վառել ա, բայց վոչինչ: Նորը վոր գը-
ցեմ՝ կարդին բան կդառնա:

— Բա ձիու համար փող, —անհանդստացավ
Սրապը:

Սրապն այդ մասին կարող ե չմտածել: Բե-
նոն ինքը լավ գիտի, վոր առանց փողի չի կա-
րելի: Այդ մասին նա խոսել ե կոռպերատիվի
վարչության հետ:— վարկ են խոստացել: Ա! թե
ինչ:

Վարկ... ելի վարկ: Մի թալակ չմնի դա,
վոր վերջը հանկարծ տնովառեղով պարտական
մնան, — մտածում են աղերքը:

Նորից խոսեցին ձիու մասին: Յեզեկը հայտ-
նեց, թե լսել ե, վոր տերտերն ուզում ե ձին
ծախել.

— Համա՞: Տերտերի ձին փիսը չի, — ասաց Վար-
թևանը հմուտ մարդու հեղինակավոր ձայնով, —
Լավ յաբու ա: Նստած ժամանակ ցընգը-ցընգը ա
անում, բայց կաչկումը լավ կերթա: Բա իմ տ
ծախում, — հարցըց նա Յեզեկին դառնալով:

— Ասում ա՝ իրան պետք չի: Առաջ շա-
բաթը յերկու անգամ գնում եր Յեղնուտ, հիմի,
ասում ա՝ «ոգուտ» չկա. Ժողովուրդը վոչ ժամա-
գնում, վոչ ել ժամ ու կնուք, հարսանիք ա ա-
նում — դրա համար, — Յեզեկի փոխարեն արագ
պատասխանեց Սրապը:

— Այ թե հա՞ — ձեռը մտրակի պես թափ-
տվեց Վարթևանը: — վոր եղան ա՝ եժան կտա:

— Շատ ել մի ուրախանա, — նկատեց Սրա-
պը: — Տեր-Մինասն ուրիշ ելեմենտ ա...:

Մյուս որը Բենոն ու Վարթևանը գնացին
տերտերի մոտ՝ ձին առնելու:

Տեր-Մինասն ապրում եր յեկեղեցուց քիչ
հեռու՝ իր կոմինտրե տանիքով և բարձր պատըշ-
գամբով տանը: Վերջերս նա ավելի տնտե-

սությամբ եր զբաղվում, քան քահանայությամբ,
վորովհետև յերեք տարի յեր կարգին ժամեր-
գություն չեր ունենում. մարդ քիչ եր գնում
յեկեղեցի — մի քանի պառավ ու մի յերկու ծե-
յլ բունիք, այն ել վահ ամեն որ: Բացի սրանից,
տեսնելով վոր զյուղացիք այլև կնուքի, հարսա-
նիքի համար ժամ չեն գալիս կամ գալիս են
շատ քիչ, ինչպես ինքն եր ասում՝ «հատ ու
կենա», այդ պատճառով իրեն նվիրել եր տնտե-
սության: Փարաջան հանած, դարնանը վար ու
գանք եր անում, ամառ՝ հունձ ու կալ: Փարա-
ջան հագնուում եր պարապ ժամանակ, զյուղա-
շմեջ դուրս գալիս և կիրակի որերը, յերբ գնում եր
յեկեղեցի: Յերբեմն եր յերբ ժամհարը չեր գա-
լիս, զանգերը քաշում եր ինքը, խորանից վերց-
նում եր փիլմնը, զցում ուսերին և շարունակ յետ-
սակավաթիվ ժամագորներին նայելով, շտապ-շտապ
աղոթքներ ասում իրար յետեց: «Տերտերի
աղոթքներ ասում իրար յետեց: «Տերտերի
յեկեղեցին ասում ելին ծե-
կարդումքը խարաբ ա ելել»: — ասում ելին ծե-
կարդում իրար, ու հիշում այն որերը, յերբ զյուղը
յերեն իրար, ու հիշում այն որերը, յերբ պանի տիրացու-
յերկու տերտեր ուներ և մի քանի տիրացու
փոխ ելին ասում, շարական... չիմի տեր-Մինա-
սի մնացել եր մենակ — և յերգում եր, և աղոթք
ասում, և փոխ: Ու այդ բանը ծերերին դուր
չեր գալիս: «Ժամը փոխած ա ըեռում», ասում
չեր գալիս: «Ժամը փոխած ա ըեռում», ասում
ելին նրանք: Տեր-Մինասն ինքն ել գոհ չեր —

«ոգում չկար», ուզում եր տերտերությունը
թողնել, բայց շարունակում եր ակամա, ինչպես
ինքն եր ասում «նամուսի ծերա»... Առաջ նա
«հովվելու» յեր գնում նաև մոտակա Յեղնուտ
փոքրիկ դյուղը, բայց հիմա այլևս չեր գնում:
«Զիու նալը (պայտը) չարժի», ասում եր: Ուս-
տի քանի վոր ձին պահում եր Յեղնուտ գնալ-
գալու համար, և քանի վոր հիմա պետք չեր
գալիս—ուզում եր ծախել: Այդ մասին նա մի
քանի անգամ խոսել եր Ժամի պատի տակ, ուր
ինքն ել՝ պարապ ժամանակ, նստում եր գյուղա-
ցիների հետ զրուցելու:

Այդ եր պատճառը, վոր թեհոն ու վարթե-
վանը իրենց քայլերն ուղղեցին նախ ժամի կող-
մը, կարծելով թե կարող է պատճել տերտերը
Ժամի պատի Տակ Անի: Բայց նա չկար: Միայն
մի քանի ծերունի, ձեռնափայտերին հենած,
զբոցում եյին, աչքերը կիսախուփի: Այդտեղ եր
և Թաթոս ամին: Տղաներին տեսնելով նա ուղղվեց:
— Այ բարենվ—բացականչեց նստած տե-
ղից: — Եղ առաջ բարի:

— Ուզում ենք տերտերին տեսանք, — առաջ վարթեանը: — Եստեղ չի:

— Տերտերին, զարմացավ թաթոս ա-
մին: Բա ասում են՝ գուշ ժամ, պատրագ չեք
ճանաչնեմ: Եղ վինց ա:

ԲԵՆՈՒ ՃԵՌԸ ԹԱՎԻ ՄՎԵՐԻ
— ՄԵՆՔ ՄԵՐՄԵՐԻՆ ՌԵՎՈՎՄ ԻՆՔ ՌԵՎՈՎՄ

— Ուզում ենք նրա ձին տոնենք, — հպար-
տադավ Վարթևանը:

— Զի՞ն: Հա,— զիլսով արագ տարսում
մին.— ծախում ա: Հենց յերեկ ասում եր «առնող
ըլի-ծախեմ» գնանք: Հենց քիչ առաջ ինքն ել
գնաց առւն:

Ու թափոս ամին, ծերերին հրաժեշտ տալով,
միացավ Բենոյին ու Վարթևանին:

— Բայց լավ ձի ա: Զեք կոշտ է և ու մասնեք, — սկսեց նա: — Վոր նստում եմ՝ թոցնում ա: Լավ ել յեռիշ ունի:

Կարթևանը խնդաց. — Լավ յերիշշ... մի զլուխ յընզբ-յընզբ ամսում: Դա ա լավը: Դու զեռ լավ յերիշ չեմ տեսեմ: ... Համաձան հանած

Տեսակները տանին եր: Նա փարաջան համար,
Տերտերը տանին եր: Նա փարաջան համար,
կարծ կապայով, վոր հազիվ ծնկներին եր հաս-
նում, և շալփարի վորդերը հետ ծալած աշխա-
տում եր տան առաջ: Բահով առու յեր վորում,
վոր ջուրը տանին երքեւ:

Տերաերի տունը պարսպապատ եր: Դադա-
ուներ Գաղանի և Բլատի վեթակներ, մոտ քառա-
սուն-հիսուն հատ, զորոնց գլխին այդ ժամանակ

մի համառ ծավալուն բզզոց եր կանգնած—յետաշյա բոռախաղը:

Բակը մանողներին նկատելով՝ տերտերը
բահը ձեռին առաջ յեկավ:

— Տերտեր, տղերքը ձիդ առնելու յեն յեկեւ—սկսեց Թաթոս ամին առանց այլայլի:—
Ուզում են տեսնեն:

— Հա՛, Ում համար եք ուզում,—հարցրեց
տերտերը, չալած միրուքը բոռունցքի մեջ հավաքելով և խոշոր աչքերի հայցքը փոխեփոխ
բնոյի ու վարթեանի յերեսը գցելով:

— Մեզ համար,—ասաց Բենոն:

— Չեր կոմունի... Լա՛վ, դուք ենքան մի-

ջոց ունեք վոր...:

— Կըգտնի, —ասաց Բենոն:

Տերտերը լրջացավ:

— Աստված ավելի աջողություն տա, ախ-
պեր: Բայց, ինչքան գիտեմ, զործը նոր եք սկսել:
Ո՞վ ե իմանում...

— Են, տերտեր, դու ել բան ես ասում,—
միջամտեց Թաթոս ամին:—Առանց փողի ով կը-
գա, թե՝ ձի յեմ առնում:

— Իսչու չե, —նկատեց տերտերը:—Են որը
Յեղուուից մին յեկել ե, թե՝ «տերտեր, ձիդ
տուր—աշունքը փողը կտամ»: Այժմայ—ձեռը
տարուքերեց տերտերը:—«Աշունքը»... իսելքս

հացի հետ եմ կերել, իսչ ե: Ասի՝ «կարալ չեմ»:
Հիմի դրա համա եմ ասում: Յեթե դուք ել պի-
տի ասեք «աշունքը»—չխոսենք:

— Զե, տերտեր, մերը՝ նաղդ ա, —ընդհա-
տեց Վարթեանը:—Մենք պարտքի հետ դուխ
չունենք:

— Հա՛. դե վոր եղակս ե՝ համեցեք,—ա-
ռաջ ընկավ տերտերը դեպի գոմը, բայց հազիվ
յերկու քայլ եր արեւ յետ դարձավ ու ձայն
տվեց:—Բարթուղ, Բարթուղ...

Մենյակից պատշպամն յելավ մի տասյոթ-
տասնութ տարեկան պատանի՝ քաղաքի շուրեր

հագած, մազերի փունջը ձակատին:

— Արի, մի Արաբին դուրս բեր, —ասաց
տերտերը:

Տղան վազեվազ իջավ պատշպամից ու վա-
զեց դեպի գոմը: Յերկու ըոպե անց, զզի թոկից
դուք պատանի լայնացրած նայեց շուրջը: Ցածրիկ
ուռնգները լայնացրած նայեց դուրս: Ցածրիկ
ուռնգները լայնացրած նայեց ըրդոտ, մազերն ան-
ձի յեր՝ վիզն ու վոտները բրդոտ, մազերն ան-
ձի լայները: Բըդոտ պոչը սրունքներին հազիվ
եր համառում:

— Ես ա, —ասաց տերտերը:—Վարթեանը
շատ ա տեսել դու ել տես, —դարձավ նա Բե-
շատ ա տեսել դու ել տես,

մի համառ ծավալուն բզզոց եր կանգնած—յետ-
ճաշյա բոռախաղը:

Բակը մտնողներին նկատելով՝ տերտերը
բահը ձեռին առաջ յեկավ:

— Տերտեր, տղերքը ձիդ առնելու յեն յե-
կեւ—սկսեց թաթոս ամին առանց այլկայլի:—
Ուզում են տեսնեն:

— Հա՞՛, Ում համար եք ուզում,—հարցը եց
տերտերը, չալած միրուքը բոռւնցքի մեջ հավա-
քելով և խոշոր աչքերի հայացքը փոխեփոխ
բենոյի ու վարթեանի յերեսը գցելով:

— Մեզ համար,—ասաց Բենոն:

— Զեր կոմունի... Լա՛վ դուք ենքան մի-

ջոց ունեք վոր...:

— Կըգանվի,—ասաց Բենոն:

Տերտերը լրջացավ:

— Աստված ավելի աջողություն տա, ախ-
պեր: Բայց, ինչքան գիտեմ, զործը նոր եք սկսել:
Ով ե իմանում...

— Են, տերտեր, դու ել բան ես ասում,—
միջամտեց թաթոս ամին:—Առանց փողի ով կը-
դա, թե՛ ձի յեմ առնում:

— Ինչու չե, —նկատեց տերտերը:—Են որը
Յեղնուտից մինն յեկել ե, թե՛ «տերտեր, ձիդ
տուր—աշունքը փողը կտամ»: Այս հա՛յ—ձեռը
տարուբերեց տերտերը:—«Աշունքը»... խելքս

հացի հետ եմ կերել ինչ ե: Ասի՝ «կարալ չեմ»:
Հիմի դրա համա եմ ասում: Յեթե դուք ել պի-
տի ասեք «աշունքը»—չխոսենք:

— Զե, տերտեր, մերը՝ նաղդ ա, —ընդհա-
տեց վարթեանը:—Մենք պարտքի հետ զուխ-
չունենք:

— Հա՛. դե վոր եղպես ե՝ համեցեք,—ա-
ռաջ ընկավ տերտերը դեպի գոմը, բայց հազիկ
յերկու քայլ եր արել յետ դարձավ ու ձայն
տվեց:—Բարթուղ, Բարթուղ...

Մենակից պատշամի յելավ մի տասյոթ-
տասնութ տարեկան պատահի՝ քաղաքի շորեր
հագած, մազերի փունջը ճակատին:

— Արի, մի Սրաբին դուրս բեր, —ասաց
տերտերը:

Տղան վազեվազ իջավ պատշամից ու վա-
զեց դեպի գոմը: Յերկու ըոպե անց, զգի թոկից
բունած դուրս քաշեց մի սկ ձի, վորը, գնմի խա-
վարից լույսը դուրս գալով, աչքերը թարթելով,
ուսնագները լայնացրած նայեց շուրջը: Ցածրիկ
ուսնագները լայնացրած նայեց սրբութ, մազերն ան-
ձի յեր՝ վիզն ու վոտները բրդութ, մեջը խոտի ու դարմա-
հարթ, բաշը խճճված և մեջը խոտի ու դարմա-
հարթ, վիզն ու վոտները բրդութ, մազերն ան-
ձի կտորներ: Բրդութ պոչը սրունքներին հազիկ
եր համանում:

— Ես ա, —ասաց տերտերը:—Վարթեանը
շատ ա տեսել դու ել տես, —դարձավ նա Բե-
շատ

նոյին:—Լավ յերիշ ունի, լավ ել խասիաթ. նըս-
տեցիր—գյամը բաց թող. վեր գցել փախցնել
չգիտի: Մարդու խելք ունի. ընկած շորո չը առ-
ըսրում:

— Ինձ յերիշը պետք չի, — ասաց Բենոն: —
Յես լծելու համար եմ ուղուժ:

— Հծել.. հըմ: Սա ենպես ձի յե՞ւ ուզում
ես յետկիցը պոեզ (գնացք) կապի՝ կտանի: Ինքս
ել Փուրդունչուց եմ առել—շարունակիեց ու
տերը:

Բենոն ու Վարթևանը նայեցին, շոշափեցին
ձիու կողերը, գլուխը, վոտները, Զին թվում եր
անհանգստանում ե անծանոթների շփումից. ա-
կանջները խլցելով՝ վոտները բարձր ու ցածր եր
անում շարունակ:

— Լավը ա, լավը, — կրկնում եր թաթոս ա-
մին, նեղաբաելով, վոր տղերքը շատ մանրամասն
են անտղում, — Առեք, ճանա!

Թաթոս ամին սիրում եր առհասարակ մաս-
նակցել գործարքների, հաշտեցնել կողմերին, մի
բան, վլուխ բերել: Յերբ լսում եր դյուզում մի
տեղ առ ու ծախ կա—շտապում եր հաշտեցնող
խոսք ասել կամ յերբ իմանում եր այսինչ տա-
նը նշանդրեքը, կամ բաժանքը վլուխ չի գալիս—
գնում եր համոզելու, մասամբ խրատելու, փոր
գործը վլուխ դա և մագարիչ անեն: Յեվ վոչ

վոք ել նրանից դժգոհ չեր լինում։ Ըստհակառակում—սիրում եյին, վոր ոպնում ե իրենց։ Յեզ յերբեմն, այնտեղ, ուր նա չեր լինում—նրա կարիքն զգում եյին։ Այժմ ել տերտերն ուրախ եր, վոր նա յեկել ե—ինքը գնորդների հետ մենակ վիճին։ Ուրախ եյին նույնպես Բենոն ու Վարչի թևանը. Թաթոս ամին հնարավորություն կտա, վորպեսզի սակարկեն և գործը շուտ վերջացնեն, վորպինետե նրանք ձին հավանում եյին և կու վորովինետե նրանք ձին հավանում եյին։ Կազմեյին վոր շուտ գնեն ու գործի անցնեն։ Կանաչին վաղվանից պիտի տանեն քաղաք։ Կարող եյին, ի հարկե, մի քանի որ հետո յեւ բայց վորքան շուտ, այնքան լավ։

Ու անմիջապես անցան գնիս։ Տերտերը
պահանջեց հարյուր ռուբլի։ Աւրիշ ժամանակ լի-
ներ, նա, ի հարկե, չեր ծախի, բայց, «այ տես-
նում եք, վորդին քաղաք պիտի գնա, փողի պատ-
ճառով մնացել ե տանը նստած։»

Տղերքը զլուխներն որորեցին—թանգ եւ Առորից նայեցին, շոշափեցին ձիուն։ Սակարկեցին։ Թաթոս ամին միջամտեց նորից և, վերջապես մեւեն ճառակեցրեց իննսուն ոռոքով։

Զին ակամա յետելեց անձանոթ մարդկանց

և զարմացած նայեց յետ, դեպի տիրոջ տունը.
ուզում եր իմանալ կարծես, թե արդյոք ուր են
տանում իրեն։ Ու դանդաղացրեց քայլերը։ Վար-
թեանը, սակայն, արագ ձիգ տվեց նրա թոկը։
— Նու, խալերա՛ ...

Թեև շտապում եյին, բայց և այնպես, թաթոս
ամուս մի թաս ողի խմացնելու համար, տղերքը
մտան կաղ-Մացակի խանութը, ուր նա մանրու-
քի հետ միասին ծախում եր նաև ողի ու գինի,
և ուր մեկ-մեկ, թաթոս ամուսած, «բուկնե-
րը թրջելու» եյին գալիս վարդաձորի ծերերն
ու ջահելները: Դա դռներն ու փեղկերը կարմիր
ներկած՝ ցածրիկ խանութ եր, վորի ճակատին
նա՝ կաղ-Մացակը կպցրել եր հետեյալ, տերտերի
խմբագրությամբ գրած, ցուցանակը.

ՄԱՆՐՈՒՆՔ
ՄԱՑԱԿ

Յերբ տղերքը ներս մտան՝ մի ևումբ ջահել-
ներ, փայտե նստարանների վրա, խանութի մի-
ակ սեղանը շրջապատած, ինչ վոր յերգ եյին
մռում կիսաձայն՝ զլուխներն ու իրաններն
